AZG NEW 1.QXD 7/20/2009 10:32 PM Page 1


# Ազգ Azg

21 ՅՈՒԼԻՍ 2009 ԵՐԵՔՇԱԲԹԻ 135 (4271)

ISSN: 1829-1651


# Պաշտոնապես սկսեց գործել Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը

Հուլիսի 9-ին ՀՀ դատական դեպարտամենտը գրանցել է Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունը՝ վկայական 03Ա 085552, գրանցման համարը՝ 211.172.05109: Հայաստանում Արմենական-ՌԱԿ-ի գրանցումը պատմական կարեւոր նշանակության իրողություն է, ինչն ազդարարում է ոչ միայն հայ ավանդական կուսակցության՝ ՌԱԿ-ի նոր զարթոնքը մայր հայրենիքում, այլեւ քաղաքական-գաղափարական հավասարակշիռ ուղղության՝ ժողովրդավարության եւ ազատականության տարածումն ու արմատավորումը:

Կուսակցության հիմնադիր համագումարից մոտ մեկ ամիս է անցել, սակայն այս ընթացքում կուսակցության հանդեպ նկատվում է մեծ հետաքրքրություն, ոչ միայն Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության նախկին անդամների, այլեւ ռամկավար-ազատական գաղափարախոսության ջատագովների ու համակիրների կողմից: Կուսակցությունը հանդես է գալիս Արմենական անունով, մատնանշելով իր կապը դեռ 124 տարի առաջ Վան քաղաքում ստեղծված Արմենական կուսակցության եւ նրա գաղափարախոսության հետ, ինչն առաջին փորձն էր հայ ազգային հզոր, միավորիչ քաղաքական ուժի ստեղծման: Եթե այն տարիներին նման կուսակցության ստեղծումը խորհրդանշում էր հայ ժողովրդի պայքարի եւ միավորման նոր ժամանակաշրջանը, ապա այսօր որդեգրելով այդ անունը մենք ձգտելու ենք Հայաստանը դարձնել իրական ժողովրդավարության եւ արդարության երկիր: Միաժամանակ, կուսակցությունը հնարավոր ամեն ինչ անելու է միավորելու սփյուռքում գործող Ռամկավար ազատական կուսակցության բոլոր շրջանակները եւ ՌԱԿ-ը դարձնելու հայաստանակենտրոն:

Արմենական-Ռամկավար ազատական կուսակցությունն ի սկզբանե հայտարարում է Հայաստանում մի քաղաքական ուժի ստեղծման մասին, որը սկսելու է ձեւավորել նոր քաղաքական բեւեռ՝ իր շուրջը համախմբելու համար այն կազմակերպություններին, որոնք վճռական են երկրում համակարգային ու խորը փոփոխությունների սկզբնավորման համար:

ԱՐՄԵՆԱԿԱՆ-ՌԱԿ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# Մամեդյարովի զգացումները եւ կառուցողական հաճախակիությունը

## *Ռուսաստանում են անցել Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների 6 հանդիպումներից 4-ը*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Իլհամ Ալիեւի 6-րդ հանդիպումն էլ տեղի ունեցավ, եւ արդեն երրորդ անգամ՝ Ռուսաստանում, մայրաքաղաք Մոսկվայի «Պրեզիդենտ» հյուրանոցում:

Հուլիսի 17-ին նախագահները ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Յուրի Մերզլյակովի (Ռուսաստան), Բեռնար Ֆասիեի (Ֆրանսիա) եւ Մեթյու Բրայզայի (Միացյալ Նահանգներ), ինչպես նաեւ Հայաստանի եւ Ադրբեջանի արտգործնախարարների մասնակցությամբ անցկացրին հանդիպում, որին հետեւել է Սարգսյան-Ալիեւ առանձնազրույցը:

Նախագահների առանձնազրույցից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կրկին հանդիպել են արտգործնախարարների հետ:

Ամերիկացի համանախագահ **Մեթյու Բրայզան** հանդիպումից հետո հայտարարել է, թե Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումն օգնել է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին մնացյալ հիմնական հարցերի առնչությամբ երկու երկրների ղեկավարների հայացքների որոշ մանրամասներ որոշակիացնել:

Սրա հիման վրա, ըստ Բրայզայի, համանախագահները կձեւակերպեն առաջարկություններ, որոնք օգտակար կլինեն բանակցությունների կողմերին՝ վիճելի դրույթներում դիրքորոշումների մերձեցման համար:

Բրայզան Սարգսյան-Ալիեւ երկրորդ մոսկովյան հանդիպումը կառուցողական է որակել, ավելացնելով, թե մանրամասն քննարկվել են ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների հիմնարար սկզբունքների բարդ դրույթները, որոնք, սակայն, նախագահների մոսկովյան հանդիպմանը չեն համաձայնեցվել:

*Տես էջ 3*

# ՆԱՏՕ եւ ԵՄ. «Գրեթե մեռած» հույսեր, Աբխազիան ու Հարավային Օսիան էլ հետը

Որ Վրաստանի նախագահը անկանխատեսելի գործիչ է եւ ընդունակ ուզած քայլի, արդեն հայտնի փաստ է: Դրա հետ մեկտեղ հայտնի է նաեւ, որ Միխեիլ Սաակաշվիլին առատաձեռն է խոստումներում եւ բավականին հաճախ է դիմում PR տեխնոլոգիաներին, անգամ, երբ սեփական հեղինակությունը հնարավոր նվազագույն ցուցանիշով է արտահայտվում:

Վրաստանի նախագահի՝ The Wall Street Journal-ում մեջբերված ելույթում նշվում է, որ Վրաստանի համար օգոստոսյան պատերազմի արդյունքում հիմնական երեք նպատակ կար: Նախ, անդամակցությունը ՆԱՏՕ-ին եւ Եվրոմիությանը, ինչպես նաեւ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի վերադարձը, որոնցից որեւէ մեկն արդեն, ըստ Սաակաշվիլու, դժվար թե հասանելի է մոտ ժամանակներս:

«ՆԱՏՕ-ին անդամակցելու Վրաստանի հույսերը գործնականում մեռած են», հայտարարել է Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին: Մոտ ապագայում, ըստ Սաակաշվիլու, Վրաստանը ոչ կարող է ՆԱՏՕ-ին անդամակցել, ոչ էլ վերադարձնել Աբխազիան եւ Հարավային Օսիան: «Սա ողբերգական է, դա նշանակում է, որ ռուսները կռվում էին ճիշտ պատճառների համար», նշվում է պարբերականում Սաակաշվիլու խոսքը:

Վրաստանի նախագահը խոստացել է 2013-ին, երբ կլրանա իր նախագահության ժամկետը, ամենայն հանգստությամբ թողնել իշխանությունը, մինչ այդ երկիրն էլ ավելի ժողովրդավարական դարձնելով:

Ա. Հ.

# «Ազգի» պաղվա կինոհավելվածում

«Ոսկե ծիրան» միջազգային 6-րդ կինոփառատոնից առաջ լույս տեսած հավելվածից հետո մեր ընթերցողներին կներկայացնենք նաեւ հետփառատոնային կինոհավելվածը, որում տեղ են գտել ոչ միայն մրցանակաբաշխության արդյունքները, այլեւ միջազգային ժյուրիի նախագահ Կոհեյ Օգուրիի յուրօրինակ մտքերը փառատոնի եւ մեր երկրի մասին, «Հայկական համայնապատկեր» մրցույթի ժյուրիի անդամ Էրիկ Նազարյանի կարծիքը այս տարվա հայկական ֆիլմերի մասին, փառատոնի տնօրեն Հարություն Խաչատրյանի եւ գեղարվեստական տնօրեն Սուսաննա Հարությունյանի ամփոփիչ խոսքը, փառատոնի հյուրերի եւ մեր կինոհանդիսատեսի ջերմ ու անկաշառ խոսքերը:

Ռ. Պ

# «Մոսկվայում ընդհանրապես չեն քննարկվել ԼՂՀ տարածքներից հայկական զորքերի դուրսբերման հարցերը»

Մոսկվայում Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպմանն ընդհանրապես չեն քննարկվել Լեռնային Ղարաբաղի որոշ տարածքներից հայկական զորքերի դուրսբերմանը վերաբերող հարցեր: Նման հայտարարություն արեց արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը՝** մեկնաբանելով Էլմար Մամեդյարովի այն հայտարարությունը, ըստ որի՝ բանակցություններում քննարկվում է ԼՂ որոշ տարածքներից հայկական զորքերի դուրսբերման ժամանակացույցը: Է. Նալբանդյանը նաեւ ընդգծեց, որ Հայաստանն իր հավանությունը մադրիդյան փաստաթղթին չի տվել: «Այդպիսի հայտարարություն պաշտոնական մակարդակով երբեւէ չի արվել: Մենք ասել ենք, որ Մադրիդյան փաստաթուղթը հիմք է բանակցությունների համար», ասաց նախարարը: Նալբանդյանը նաեւ հերքեց այն տեղեկությունները, թե Հայաստանը Թուրքիայի հետ պատմական համատեղ հանձնաժողով ստեղծելու մասին փաստաթուղթ է ստորագրել: Նալբանդյանը ընդգծեց, որ համապատասխան փաստաթղթեր կլինեն միայն փոխադարձ հարաբերությունների կարգավորման, սահմանի բացման եւ մի շարք այլ հարցերով զբաղվող միջկառավարական հանձնաժողովի ստեղծման վերաբերյալ: Այդ հանձնաժողովն իր ենթահանձնաժողովների միջոցով կզբաղվի տարբեր հարցերի լուծմամբ, նաեւ՝ փոխհարաբերությունների ձեւավորմամբ: Նա եւս մեկ անգամ համոզմունք հայտնեց, որ հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը շահավետ կլինի ողջ տարածաշրջանի համար, որի մի մասնիկն է նաեւ Ադրբեջանը: Վերջինս, ի դեպ, միակ երկիրն է, որը դեմ է Հայաստան-Թուրքիա հարաբերությունների բարելավմանը:

## Մոսկվայում քննարկվե՞լ է ԼՂՀ-ում հանրաքվեի անցկացման հարցը

Ըստ Panarmenian.net-ի, Հայաստանի ու Ադրբեջանի նախագահները մոսկովյան հանդիպման ժամանակ քննարկել են Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի ճշտման հնարավոր հանրաքվեի անցկացման կարգը: Այդ մասին գրում է «Կոմերսանտ» թերթը՝ ՌԴ ԱԳՆ-ի հղումով: «Հայաստանն ու Ադրբեջանը դեռեւս համաձայնության չեն հասել կետերից եւ ոչ մեկի շուրջը», գրում է թերթը՝ նշելով, որ բանակցություններն ընթանում են փակ դռների հետեւում: «Կոմերսանտի» զրուցակիցները ՌԴ ԱԳՆ-ում հաղորդել են, որ առանցքային էին հակամարտող տարածաշրջանի բնակչության ինքնորոշման վերաբերյալ քվեարկության կարգի մասին հարցը եւ առաջարկվող «միջանկյալ կարգավիճակի» էությունը: Մադրիդյան սկզբունքների 4-րդ կետը նախատեսում է Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերջնական որոշում «կամքի արտահայտման միջոցով, պարտադիր իրավական հետեւանքներով»: Իսկ երկրորդ կետը հիշեցնում է, որ մինչ այդ Լեռնային Ղարաբաղը պետք է անցումային կարգավիճակ ունենա, որն, ինչպես մեկնաբանում են բանակցող կողմերը, «չի նվազեցնի Լեռնային Ղարաբաղի այսօր ունեցած ազատության ծավալը»:

## «Մենք ուրախ ենք բանակցային գործընթացի ակտիվացման համար»

Ադրբեջանի արտգործնախարար **Էլմար Մամեդյարովը** հանրապետություն Եվրոմիության «եռյակի» այցին նվիրված մամուլի ասուլիսում հայտարարել է, որ ադրբեջանական կողմն ընդհանուր առմամբ գոհ է ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների արդյունքներից: «Թույլ Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպման արդյունքները բեկումնային չդարձան, սակայն մենք ուրախ ենք բանակցային գործընթացի ակտիվացման, հատկապես ռուսաստանյան կողմի ակտիվության համար: Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւի հետ բանակցությունների ընթացքում վստահություն է ստեղծվում բանակցային գործընթացի հաջող ավարտի հարցում», ասել է Մամեդյարովը:

# Քաղաքագետ Իգոր Մուրադյանն էլ անցանկալի անձ Վրաստանի համար

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հուլիսի 19-ին քաղաքագետ Իգոր Մուրադյանին արգելել են անցնել Վրաստանի սահմանը: Սակայն որեւէ պատճառաբանություն այդ պահին չեն ներկայացրել: Արդեն Երեւանում՝ գործի դնելով Թբիլիսիի ընկերական շրջապատը, Մուրադյանը պարզել է, որ արգելքի համար վրացական իշխանությունը երեք հավակնություն է ներկայացրել:

«Պարզվեց, որ վտանգավոր եմ Վրաստանի անվտանգության համար: Վերջին 7 տարվա ընթացքում ավելի քան 60 վերլուծական հոդված եմ գրել միայն Սամցխե-Ջավախքի մասին՝ անդրադառնալով քաղաքական, հասարակական խնդիրներին: Այդ հոդվածներում երբեւէ չեմ անդրադարձել Վրաստանի ներքին քաղաքականությանը: Հոդվածները գրել եմ ԱՄՆ-ի, Լոնդոնի եւ Բրյուսելի հետազոտական կենտրոնների համար»:

Մուրադյանը նկատում է, որ հոդվածները, որոնցում կային բազմաթիվ կարեւորագույն փաստեր, ստանում էին վերոնշյալ երկրների պետական մարմիններում, կառավարությունում, Եվրոխորհրդում:

«Ունեցել եմ բազմաթիվ հանդիպումներ եվրոպացի քաղաքական գործիչների հետ, որոնց հետ էլ խոսել եմ բացառապես Ջավախքի խնդիրների մասին: Մի քանի անգամ որպես փորձագետի հրավիրել են Լոնդոն, որտեղ քննարկվում էր Վրաստանի եւ Հարավային Կովկասի հարցը: Բայց դրանք որեւէ կապ չունեն 60 հոդվածների հետ»: Քաղաքագետը վստահեցրեց, որ կարող է այդ փաստաթղթերը ներկայացնել հանրության ուշադրությանը, միաժամանակ հավելելով, որ դրանցով հետաքրքրվում են բոլորը՝ բացառությամբ հայ քաղաքական վերնախավի:

*Տես էջ 3*

AZG NEW 2.QXD 7/20/2009 10:08 PM Page 1



# «Առաջիկա ամիսներին զգալի երկրաշարժեր չեն լինելու»

- Ի՞նչ կանեք, եթե երկրաշարժ լինի,- հարցրեցի 50-ամյա **Արմինե Սարգսյանին:**

- Կփախչեմ,- պատասխանեց նա, հետո էլ ավելացրեց,- կարելի է սեղանի տակ մտնել, կամ էլ հիմքերի մոտ կանգնել:

Խուճապն ու չգիտես ուր փախչելու մտադրությունն առաջինն են մարդկանց համակում երկրաշարժի դեպքում:

Հարյուր տոկոսանոց սեյսմավտանգ Հայաստանում երկրաշարժի դեպքում գործող վարքականոնները կրթական հաստատություններում ուսուցանվում են ընդամենը մի քանի դասաժամերի ընթացքում:

**Աննա Այվազյանը** 16 տարեկան է, սովորում է Երեւանի հենակետային բժշկական քոլեջում: Թե ինչ պետք է անի երկրաշարժի դեպքում, ապագա դեղագործը լսել է երկու անգամ: Ռազմագիտության ուսուցիչն առաջնայնորեն նրան երկու կանոն է սովորեցրել. խուճապի չմատնվել եւ կանգնել բնակարանի հիմքերի մոտ: «Կարեւորն այն է, որ խուճապի չմատնվես», ասաց Աննան:

Խուճապը մասսայական, սոցիալ հոգեբանական վիճակ է, հոգեբանական վարակի հետեւանք, նկատում է հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Նաիրա Հակոբյանը**: «Գիտելիքն ու ինտելեկտն այս դեպքում որեւէ նշանակություն չունեն: Խուճապի դեմ պայքարի միակ ձեւը տեղեկացված լինելն է: Եթե մարդ տեղեկացված է եւ գտնվում է խուճապի մատնված ամբոխում, ապա խուճապը ավելի մեղմ կարտահայտվի եւ այդ հոգեվիճակից ավելի հեշտ դուրս կգա», ասաց Նաիրա Հակոբյանը:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայության ղեկավար **Ալվարո Անտոնյանն** ասում է, որ իրենք մշտական աշխատանք են տանում իրազեկման ուղղությամբ, նրանց օգնում են հասարակական կազմակերպությունները: Համեմատելով մարդկանց իրազեկության մակարդակը նախորդ հինգ տարիների հետ՝ Ալվարո Անտոնյանն առաջընթաց նկատում է: «Վախի եւ խուճապային տրամադրություններ կան: Մենք դասախոսություններ ենք անցկացնում, բուկլետներ տպագրում եւ մարդկանց տեղեկացնում, թե ինչպես պետք է իրենց պահեն երկրաշարժի դեպքում: Սա ամենօրյա աշխատանք է, եւ չի լինի մեկ օր, որ ասենք, թե մեր աշխատանքն այդ ուղղությամբ ավարտված է», ասաց Ալվարո Անտոնյանը:

Աննշան ցնցումներ լինում են օրական 20-25 անգամ: «Սա նորմալ երեւույթ է: Երկրակեղեւն անընդհատ շարժման մեջ է: Հայաստանի տարածքը յուրաքանչյուր տարի 15 մմ շարժվում է դեպի հյուսիս: Վերջին զգալի երկրաշարժը հունիսի 18-ին էր՝ Գառնիից հյուսիս: Երեւանում եւ հարակից բնակավայրերում ցնցումը կազմել էր 3- 4 բալ, էպիկենտրոնում 5 բալ էր», ասաց Ալվարո Անտոնյանը:

Սեյսմիկ պաշտպանության ազգային ծառայությունում փորձում են կանխատեսել երկրաշարժերը՝ տալով դրանց տեղի, ժամանակի եւ ուժգնության հավանական բնութագրերը: Կանխատեսումները կատարվում են 2-3 ամսվա կտրվածքով: «Առաջիկա ամիսներին զգալի երկրաշարժեր չեն լինելու: Մարդիկ կարող են հանգիստ լինել: Ինչ վերաբերում է հունիսի երկրաշարժին, ապա հետցնցումներն արդեն մարել են, իսկ երկրաշարժն այնքան ուժեղ չէր, որ գրանցվեին երկրակեղեւի փոփոխություններ», հայտարարեց Ալվարո Անտոնյանը:

Ինչ վերաբերում է եղանակի փոփոխությանը, ապա Ալվարո Անտոնյանը վստահեցնում է. եղանակի շատ տաք կամ ցուրտ լինելը երկրաշարժերի հավանականության կամ առաջացման վրա չի ազդում:

ԱՐԵՎԻԿ ԲԱԴԱԼՅԱՆ

# Ս. Աննա եկեղեցի Երեւանի կենտրոնում

*Հայ առաքելական եկեղեցին Սուրբ Աննայի հղիության տոնը նշում է դեկտեմբերի 9-ին*

**Հուլիսի 4-ին Երեւանի Աբովյան-Սայաթ-Նովա փողոցների խաչմերուկին հարակից տարածքում գտնվող Ս. Կաթողիկե եկեղեցուն կից վայրում, կատարվեց Սուրբ Աննա եկեղեցու եւ Վեհափառ հայրապետի երեւանյան նստավայրի հողօրհնեքի արարողությունը, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի: Եվ այդ օրվանից մամուլի որոշ օրգաններ տպագրեցին հասարակության մեջ կասկածներ հարուցել Աննա անվան նպատակահարմարության շուրջը, պնդելով, որ նա մեր եկեղեցու սրբերի դասին չի պատկանում, չհիշելով կամ չիմանալով անգամ, որ Աստվածամոր մոր անվան եկեղեցիներ մենք արդեն իսկ ունենք Հայաստանում (Մալիշկայում եւ Գանձակում), ինչպես նաեւ Մ. Նահանգների Իլինոյս նահանգում (Ս. Աննա եւ Հովակիմ):**

**«Ազգը» դիմեց Գեւորգյան ճեմարանի դասախոս Ղեւոնդ քահանա Մայիլյանին՝ պարզաբանումներ տալու խնդրանքով: «Հայ եկեղեցիները, որպես կանոն, կրում են եկեղեցական տոնացույցում հիշատակված սրբերի անունները,- ասաց տեր հայրը:- Կարող են ունենալ նաեւ ընդհանրական անուններ, օրինակ՝ Նահատակաց եկեղեցի, Քառասուն մանկանց եկեղեցի եւ այլն: Մեզանում տոների սրբերի ցանկը բավական ընդարձակ է, ընդգրկում է ոչ միայն սուրբ գրային անձերին, այլեւ՝ ազգային, եկեղեցական, պատմական: Հայսմավուրքում հիշատակված անձերի անունները կրող եկեղեցիներ Հայոց աշխարհում շատ կան: Նահատակված սրբերի նշխարների վրա միշտ կառուցվել են նրանց անունը կրող եկեղեցիներ: Ընդ որում պարտադիր չէ, որ սուրբը հայ լինի: Մեզանում շատ սիրելի են, օրինակ, Ս. Սարգիսը, Ս. Գեւորգը, որոնք ազգությամբ հայ չէին: Ցայտուն օրինակ են նաեւ Ս. Պանդալեոն բժշկի (ազգությամբ հույն, 3-4-րդ դդ) անունը կրող եկեղեցիները: Այս տոնելի սրբի անունով մի մատուռ կա Հայոց աշխարհում: Մռավա լեռնաշղթայից հյուսիս-արեւելք գտնվում է Պանդ անունով լեռնագագաթը (Գանձակի լեռներում), որտեղ այսօր էլ պահպանվել են Պանդ անունով մի մատուռի ավերակները: Ըստ ավանդության, այդտեղ է թաղված Ս. Պանդալեոն բժիշկը: Այս ուխտատեղին մեծ համարում ունի Արցախում եւ հայտնի է որպես բժշկություն պարգեւող ուխտատեղի:**

**Հայ եկեղեցիների ցանկի մեջ ամենատարածվածը Ս. Կույսի անունը կրող եկեղեցիներն են: Ս. Աստվածամոր հետ կապված ամեն ինչ անցել է հայոց տոնացույց: Համեմատության համար նշենք, որ Ս. Գրիգոր Լուսավորչին մեր օրացույցը հիշում է 3 անգամ, Ս. Խաչին նվիրված տոները չորսն են, իսկ Աստվածամոր հետ կապված ունենք 7 տոն: Դրանք են՝ Հղիությունը Աննայի (Ս. Կույսի մայրը)՝ դեկտեմբերի 9-ին, Ս. Կույսի**



**ծնունդը՝ սեպտեմբերի 8-ին, Ընծայումը տաճարին՝ նոյեմբերի 21-ին, Ավետումը՝ ապրիլի 7-ին, Վերափոխումը՝ օգոստոսի 14-ի մոտակա կիրակին, Ս. Կույսի գոտու գտնվելը՝ օգոստոսի 21 - սեպտեմբերի 1-ը, Ս. Կույսի տուփի գտնվելը՝ Հոգեգալստի 5-րդ կիրակին: Հավելյալ նշվում է նաեւ Ս. Կույսի ծնողների հիշատակի օրը՝ Վերափոխման հաջորդ շաբաթվա մեջ: Այսպիսով, Ս. Կույսի մայրը հայոց մեջ հիշվում է 2 անգամ, ուստի եւ նրա անվամբ եկեղեցիներ մեզանում կանոնական երեւույթ են»:**

**Կարծում ենք, Ղեւոնդ քահանայի այս բովանդակալից եւ մանրամասն բացատրությունը շատ ինչուների պատասխանը տվեց, եւ եթե կլինեն այլ հարցեր կապված նույն խնդրին, «Ազգը» պատրաստակամ է օգնելու իր ընթերցողներին:**

**Վստահ ենք, որ մի քանի տարի հետո մեծ շուքով կօծվի Երեւանի Սուրբ Աննա եկեղեցին ու իր դռները կբացի հավատացյալների առջեւ:**

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Ամենայն հայոց կաթողիկոսն օծեց Արմաղանի Ս. Հարություն մատուռը



Հուլիսի 18-ին Գարեգին Բ ծայրագույն պատրիարք եւ Ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ օծվեց Գեղարքունիքի մարզի Արմաղանի Ս. Հարություն մատուռը, որի բարերարն է տաշքենդաբնակ Ռադիկ Մխիթարյանը: Այն կառուցվել է Ռաֆիկ Հերգընյանի նախագծով:

Սրբազան արարողության ավարտին Վեհափառ հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը հայտնեց մատրան բարերարին եւ կառուցմանը նպաստած բոլոր մարդկանց: Հայոց հայրապետն ուրախությամբ արձանագրեց, որ մատուռն օծվում է Տիրոջ Ս. պայծառակերպության տոնի նախաճեմին՝ հույս հայտնելով, որ այն պիտի դառնա մի Թաբոր լեռ, որից պիտի տիրոջ լույսը եւ օրհնությունը ճառագի մարդկանց սրտերից եւ հոգիներից ներս:

Այնուհետեւ հայոց հայրապետը, ընդառաջելով Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպիսկոպոս Հովհաննիսյանի խնդրանքին եւ բարձր գնահատելով Ռադիկ Մխիթարյանի ծառայությունները ու վաստակը, նրա կուրծքը զարդարեց Հայոց եկեղեցու «Ս. Ներսես Շնորհալի» պատվո բարձր շքանշանով:

Մատրան օծմանը ներկա էին ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը, փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանը, պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ Տ. Սահակ եպիսկոպոս Մաշալյանը, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ, մարզային եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ:

# Ներսես Կարամանուկյանը «Արդշինինվեստբանկի» վարչության նախագահ

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկի» մամուլի ծառայությունից, բանկի վարչության նախագահ է նշանակվել Ներսես Կարամանուկյանը: Ներկայացնելով նորանշանակ վարչության նախագահին, բանկի խորհրդի նախագահ **Կարեն Սաֆարյանը** վստահեցրել է, որ նա կդառնա «Արդշինինվեստբանկում» ձեւավորված աշխատանքային լավագույն ավանդույթները շարունակողը:

Ներսես Կարամանուկյանն իր հերթին նշել է, որ հետագա գործունեության ընթացքում հաշվի են առնվելու ինչպես առկա միջազգային ֆինանսական դժվարությունները, այնպես էլ մեր երկրի տնտեսության առանձնահատկությունները՝ բոլոր հաճախորդների համար շարունակելով ապահովել լավագույն պայմաններ բանկի ծառայություններից օգտվելու համար:

Մինչ այս նշանակումը Ներսես Կարամանուկյանը Համաշխարհային բանկի Միջազգային ֆինանսական կորպորացիայի (IFC) երեւանյան գրասենյակի ղեկավարն էր:

Ա. Մ.

# Հայտնի դարձան Երեւանի մամուլի ակումբի մրցանակակիրները

**Երեւանի մամուլի ակումբի 14-ամյակի կապակցությամբ տեղի ունեցավ լրագրողական աշխարհի ամենամյա մրցանակների հանձնման արարողությունը: Այս տարի ակումբի մրցանակին արժանացան ֆոտոլրագրող Ռուբեն Մանգասարյանը (հետմահու), լուսանկարիչ Վահան Քոչարը՝ «Հայ լուսանկարիչներ» գրքի համար:**

**Մասնագետների ուշադրությունից չվրիպեցին «Շանթ» հեռուստաընկերության մեկնաբան Արտյոմ Երկանյանի հայ-թուրքական հարաբերություններին նվիրված ֆիլմաշարը, «Ինտերնյուս» կազմակերպության՝ «Եվրոպական հակամարտությունների մասին» ֆիլմաշարը, «Երկիր մեդիա» հեռուստաընկերության ԵՄԱ հետ արդյունավետ համագործակցությունն ու Թաթուլ Հակոբյանի «Կանաչ եւ սեւ» գիրքը:**

Հ. Հ.

# Ճշտում

**Անցյալ հինգշաբթի օրը, հուլիսի 16-ին, «Կալիֆոռնիա կուրիեր» թերթի հրատարակիչ եւ խմբագիր Հարութ Սասունյանի հերթական՝ «Ավելին՝ քան հայերից շատերը» վերնագրով հոդվածի թարգմանության մեջ թույլ է տրվել սխալ: Ուելսում ապրող հայասեր գործիչ Էյլիան Ուիլյամսը ոչ թե հոգեւոր հովիվ է, այլ պարզապես հովիվ: Մեր պատկերացմամբ, հասարակ հովիվը չէր կարող այդքան մեծ դեր կատարել մի ուրիշ ազգի՝ հայերիս ազգային դատի համար: Սխալվել ենք, մեր չափումներով ենք չափել «Ուելս-Հայաստան զորակցության խմբի» հիմնադրին:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԸ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW 3.QXD 7/20/2009 10:02 PM Page 1



# Սկզբունքների գաղտնազերծումը հասարակություններին ակտիվացնելու նպատակ ուներ






Արցախյան հիմնախնդրի կարգավորման թեմայով երեկ «Հայելի» ակումբում բանավիճում էին «Տարածաշրջանային ինտեգրացիա եւ կոնֆլիկտների լուծում» կենտրոնի տնօրեն, փիլիսոփայության դոկտոր **Լյուդմիլա Հարությունյանը** եւ Հայաստանում Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության ներկայացուցիչ **Վահան Շիրխանյանը**:

Լյուդմիլա Հարությունյանը կարծիք հայտնեց, որ մադրիդյան սկզբունքների հրապարակումը նպատակ ուներ ակտիվացնելու հասարակություններին եւ պարզելու՝ հասարակությունները պատրա՞ստ են փոխզիջումների, թե՞ ոչ. «Սա շատ կարեւոր գործողություն է, եւ ինչպես ծրագրված էր, այնպես էլ գնում է: Գաղտնազերծեցին մադրիդյան սկզբունքները, հրապարակվեց համանախագահ երկրների նախագահների համատեղ հայտարարությունը, հասարակությունն էլ ակտիվացավ: Այսինքն, ոչ մի նորություն տեղի չի ունեցել: Ես անձամբ կուզենայի ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ հայ հասարակությունը միակողմանի է քննարկում խնդիրը, բայց հասարակությունը պետք է ավելի խորությամբ դիտարկի այդ խնդիրը»:

Լ. Հարությունյանը նաեւ կարծում է, որ ԼՂ-ի հակամարտությունը կարգավորելու գործընթացն արհեստականորեն էր արագացված: Այժմ, տեսնելով, որ հասարակություններն անպատրաստ են լուծումների, կդանդաղի:

Ըստ Լ. Հարությունյանի՝ 90-ականներին հրապարակված ղարաբաղյան խնդրի լուծման առաջին տարբերակը առավել նպաստավոր էր Հայաստանի համար: Հարությունյանը նկատի ունի Պրիմակովի առաջարկը, որն ունի 10-ից ավելի սկզբունք: Այդ սկզբունքներից առաջինն այն էր, որ Ղարաբաղը չպետք է լինի Ադրբեջանի կազմում, չպետք է լինի Հայաստանի կազմում եւ պետք է լինի նախագահական հանրապետություն:

«Նախագահական հանրապետությունը ստեղծվեց, Ղարաբաղը պոկվեց Ադրբեջանից, նախագահական իշխանության ներկայացուցիչ նշանակվեց Ղարաբաղում Արկադի Վոլսկին: Եվ Ղարաբաղի խնդիրը գնում էր լուծման: Երկրորդ սկզբունքը անվտանգության ապահովումն էր, երրորդ սկզբունքը՝ դեմոգրաֆիական տեղաշարժեր թույլ չտալ, եւ այսպես շարունակ: Այն ժամանակ, ցավոք սրտի, ե՛ւ մեր, ե՛ւ Ադրբեջանի ջանքերով այս ծրագիրը տապալվեց», նշում է Լ. Հարությունյանը:

«Ես ինչո՞ւ եմ փորձում հիշել այդ մոռացված տարբերակը, քանզի նոր առաջարկները շատ ավելի հետ են գնացել այն առաջարկից, որ արվել է 90-ականներին», ասում է Լ. Հարությունյանը:

Վահան Շիրխանյանն իր հերթին նկատեց, որ մադրիդյան սկզբունքներն արդեն փաստ են. «Դրանք հակահայ են, հակահայաստանյան են եւ հակաարցախյան: Քոչարյանը եւ Օսկանյանը պետք է պատասխան տան դրանց համար ԼՂՀ դատարանի առջեւ: Մենք չունենք Ադրբեջանին վերադարձնելու ոչ մի թիզ հող, այդ հողը պատկանում է Ադրբեջանի սանձազերծած, էթնիկ ջարդերից մազապուրծ նրա նախկին 400 հազար քաղաքացիներին»:

Ավելին, նա նշեց, որ մադրիդյան սկզբունքները գրեթե նույնն են, ինչ 1998-ին ցանկանում էր իրականացնել այն ժամանակ ՀՀ նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ինչն էլ նրա հրաժարականը պահանջելու պատճառ դարձավ:

«Չընդունվեց մեր կողմից: Մենք ասացինք, թե սա պարտություն եւ դավաճանություն է, եւ նա հեռացավ: Հիմա էլ ես չեմ ասում Սերժ Սարգսյան, դու հեռացիր, Լեւոն Տեր-Պետրոսյան, դու արի», ասում է Վ. Շիրխանյանը հավելելով, որ երկրում սահմանադրական կարգը վերականգնելուց հետո ՀՀ առաջնորդ տեսնում է այն մարդուն, ում կընտրի ժողովուրդը: Իսկ եթե, այդուհանդերձ, ընտրի Լեւոն Տեր-Պետրոսյանին, եւ նա կրկին ցանկանա իրականացնել նույնը, ինչ 1998-ին, ապա այդ ժամանակ կրկին կպայքարեն Լեւոն Տեր-Պետրոսյանի դեմ:

«Արցախը ոչ թե պետք է մասնակցի կարգավորման բանակցություններին, այլ վարի դրանք Ադրբեջանի հետ», ասում է Վահան Շիրխանյանը:

Լրագրողներից մեկի այն հարցին, թե բանախոսները ինչ են պահանջում ՀՀ նախագահից, Լ. Հարությունյանը նշեց. «Կատարել սեփական դերը, ձերբազատվել Ղարաբաղին պատկանող դերից, հասարակության կարծիքը լսել եւ մտահոգ լինել ապագայի մասին այն առումով, որ խաղաղությունը երբ եկավ, մեր հասարակությունն է ճաշակելու խաղաղության պտուղները: Որ Ղարաբաղի անվտանգության մասին մտահոգ են, դրանում չեմ կասկածում, բայց Հայաստանի խնդիրն էլ է կանգնած»:

Վ. Շիրխանյանն էլ պահանջում է. «Կարծում եմ, Սերժ Սարգսյանն արդեն պետք է հասկացած լինի, որ բանակցային գործընթացը տապալված է, դիվանագիտությունը պարտություն է կրել, որ եթե նա ունի ղարաբաղյան հիմնախնդրի լուծման քաղաքական ծրագիր, պետք է անցնի այդ ծրագրի իրականացմանը: Եթե նա չունի ծրագիր, պետք է հեռանա, ինչպես հեռացավ Լեւոն Տեր-Պետրոսյանը»:

Ն. Մ.

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

# Մամեդյարովի զգացումները եւ կառուցողական հաճախակիությունը

1-ին էջից

Բրայզան այս առնչությամբ հայտարարել է, թե նախագահներն ամրագրել են այն առաջընթացը, որ գրանցվել էր Սանկտ Պետերբուրգում, որտեղ «նրանք որոշ կարեւոր որոշումներ են ընդունել»:

Ֆրանսիացի համանախագահ **Բեռնար Ֆասիեն** իր հերթին հանդիպումը լուրջ որակելով ընդգծել է, թե ակնհայտ է քննարկումների լայն շրջանակը, ուստի Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահներին դադար է հարկավոր՝ գնահատելու տեղի ունեցած քննարկումները:

Մոտ 3,5 ժամ տեւած բանակցություններին արդեն հուլիսի 18-ին հաջորդել էր Հայաստանի, Ադրբեջանի եւ Ռուսաստանի նախագահների եռակողմ հանդիպումը: Այդ առնչությամբ ՌԴ նախագահի օգնական **Սերգեյ Պրիխոդկոն** հայտարարել է, թե եռակողմ հանդիպումն անցել է



կառուցողական մթնոլորտում: Նրա խոսքերով, արդեն 4-րդ անգամ եռակողմ ձեւաչափով նախագահների հանդիպմանը Ռուսաստանի նախագահ Դմիտրի Մեդվեդեւը հաստատել է Ռուսաստանի պատրաստակամությունը՝ որպես համանախագահող երկիր այսուհետեւ էլ ջանքեր գործադրել ղարաբաղյան հակամարտության փոխընդունելի լուծմանը հասնելու համար:

Իր աջակցությունը ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը հայտնել է նաեւ Եվրամիության նախագահությունը: Եվրամիության նախագահող երկրի՝ Շվեդիայի տարածած պաշտոնական հաղորդագրությամբ, ԵՄ-ն բարձր է գնահատում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ջանքերը եւ պատրաստ է հնարավոր աջակցություն ցուցաբերել նրանց միջնորդական առաքելության իրականացման համար:

Հայաստանի նախագահի մամլո գրասենյակի հաղորդագրության համաձայն, մոսկովյան հանդիպմանը կողմերը կառուցողական տրամադրվածություն են ցուցաբերել՝ շարունակելու հակամարտության խաղաղ կարգավորման բանակցությունները: Երեկ Բաքվում, սակայն, ադրբեջանական արտաքին գործոց նախարարն առավել հետաքրքրական հայտարարություն է արել, մասնավորապես նշելով, թե հակամարտության կարգավորման բանակցություններում որոշակի առաջընթաց կա:

Ադրբեջանական «Թրենդ» գործակալության հաղորդմամբ, Ադրբեջանի ԱԳ նախարար **Էլմար Մամեդյարովը** հայտարարել է, թե սեպտեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները կայցելեն տարածաշրջան՝ նախապատրաստելու Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հնարավոր հաջորդ հանդիպումը թերեւս դարձյալ Մոսկվայում: «Ես զգում եմ, որ ղարաբաղյան հակամարտության հարցում կա որոշակի առաջընթաց: Մոսկվայում նախագահների հանդիպումից հետո ինչ-ինչ հույսեր են առաջացել», հայտարարել է Մամեդյարովը:

Հիշեցնենք, որ Սերժ Սարգսյանի՝ Հայաստանի նախագահ դառնալուց ի վեր մոսկովյան այս հանդիպումը 6-րդն էր, որոնցից միայն երկուսն են եղել Ռուսաստանից դուրս՝ այս տարվա հունվարի 28-ին Ցյուրիխում եւ հունիսի 7-ին Պրահայում: Մնացյալ հանդիպումներն անցկացվել են Մոսկվայում եւ Սանկտ Պետերբուրգում:

# Քաղաքագետ Իգոր Մուրադյանն էլ անցանկալի անձ Վրաստանի համար

1-ին էջից

«Չունեմ այնպիսի տեղեկատվություն, որով կվնասեմ Վրաստանի անվտանգությունը: Իբրեւ մտադրվել եմ անօրինական կազմակերպություններ հիմնել Վրաստանում: Ոչ միայն ֆինանսներ, այլեւ նպատակ էլ չունեմ այդպիսի կազմակերպություններ հիմնելու համար: Վրաստանում կան ավելի քան 30 հայկական կազմակերպություններ՝ ե՛ւ քաղաքական, ե՛ւ հասարակական, ե՛ւ այլ բնույթի: Այդ կազմակերպությունների ներկայացուցիչներն էլ բավական ակտիվ գործունեություն են ծավալում: Հետեւաբար իմ՝ այդտեղ կազմակերպություն հիմնելը ժամանակի անիմաստ կորուստ կդառնար»:

Ապրիլի վերջին քաղաքագետի հանդիպումը Ախալցխայի հասարակական գործիչ Գրիգոր Մինասյանի հետ նույնպես վրացական իշխանությունների կազմած հավակնությունների թվում է: Հիշեցնենք, որ նախորդ տարի Գրիգոր Մինասյանն ու Սարգիս Հակոբջանյանը ձերբակալվել էին, սակայն մի քանի ամիս անց պայմանականորեն ազատ էին արձակվել:

«Գրիգոր Մինասյանը գտնվում էր վերահսկողության տակ: Նրա մոտ կա ձայնագրիչ եւ նա պարտավոր է ձայնագրել ամեն ինչ: Մարդը, որ այսքան մեծ փորձ ունի (նկատի ունի իրեն-Հ.Հ.), գիտակցում էր, թե ուր է եկել ու ինչ պետք է խոսի: Մինասյանի եւ Հակոբջանյանի ձերբակալությունից հետո համատարած ապատիա սկսվեց, ու կազմակերպությունը, որ մինչ այդ շատ լավ աշխատանք էր իրականացնում, կարծես թե գոյություն չուներ ու ինչ-որ բանի էր սպասում: Հանդիպման նպատակն էր այդ երկու տղաներին վերադարձնել նորմալ կյանքի, որ նորից սկսվեն օրինական կերպով հասարակական գործունեություն ծավալեն: Դա կդառնար օրինակ ուրիշների համար: Դժբախտաբար դա վրացիները ընկալեցին Սամցխե-Ջավախքի դրության վրա ազդելու միջոց: Ավելի մեծ հիմարություն դժվար է պատկերացնել»:

Մուրադյանը վերջին հավակնությունը բնորոշեց ամենազվարճալի ու ամենակրիմինալ: «Իբր ապրիլին բանակցություններ եմ վարել ընդդիմության ներկայացուցիչների հետ, այն հաշվարկով, թե Սամցխե-Ջավախքի բնակչությունը կքվեարկի ընդդիմության օգտին, եթե տեղի ունենան արտահերթ նախագահական կամ խորհրդարանական ընտրություններ: Այն հաշվով, որ ընդդիմությունը սոցիալ-տնտեսական, քաղաքական գնահատական տա Սամցխե-Ջավախքի իրավիճակին, որից հետո իրականացնի դրական գործընթացներ՝ այդ իրավիճակը փոխելու համար: Իբր խոսակցությունը տեղի է ունեցել Պատի Իզակարաշվիլու գրասենյակում ու անգամ կա այդ խոսակցության աուդիո ձայնագրությունը: Որպեսզի ընդդիմությանն առաջարկես ամբողջական ձայներ Ջավախքից, պետք է ունենաս ինչ-ինչ վերահսկողություն, դիրք, ինչը իմ պարագայում բացակայում է: Այդ գաղափարը ընդդիմության հետ քննարկել եմ ավելի քան 15 տարի: Խորհրդարանական յուրաքանչյուր ընտրության ժամանակ ամեն ինչ անում եմ, որ վրացահայությունն իր ձայնը տա Վրաստանի Հանրապետական կուսակցությանը, որովհետեւ այնտեղ հավաքված են քաղաքական մշակույթ եւ կոռեկտություն ունեցող ինտելեգենտ մարդիկ»:

Իգոր Մուրադյանը այս ամենից հետո սպասում է հանգուցալուծման: «Այսպես այլեւս անհնար է շարունակել», նկատեց նա:

Փաստորեն, սա առաջին դեպքը չէ, երբ վրացական իշխանություններն արգելում են հայերին անցնել վրացական սահմանը: Մի քանի ամիս առաջ անցանկալի անձ համարվեց նաեւ ՀՀԿ Շիրակ Թորոսյանը: Այդ կապակցությամբ Իգոր Մուրադյանը նկատեց. «Ինչ վերաբերում է Թորոսյանի դեպքին, ինձ պատմեցին, որ Ախալցխայում ելույթ ունենալու ժամանակ հայտարարել է, որ այստեղ նույնպես կլինի Ղարաբաղ: Մենք չգիտենք, թե նա ինչպես է այդ խոսքերն ասել, ինչ արտահայտությամբ: Մարդու խոսքերը կարելի է տարբեր կերպ մեկնաբանել: Ես այդպիսի բան չէի անի: Շատ լավ գիտեմ, թե որտեղ ինչպես պետք է ինձ պահեմ: Այդ խոսքերը կասեի այլ վայրում, ոչ հարսանեկան արարողության ժամանակ»:

Ըստ տեղեկությունների՝ վրացական իշխանությունները ցուցակ են կազմել՝ բաղկացած 20-25 հայերի ազգանուններից, որոնց մուտքը Վրաստան արգելվում է:

Իգոր Մուրադյանը նկատեց, որ ցուցակին ծանոթ է, սակայն իր անունն այնտեղ չի գտել:

# Սիրելի իմ Քաշաթաղ

Քաշաթաղի շրջանի 8000 բնակիչները հիմնականում զբաղվում են հողագործությամբ, այգեգործությամբ ու գյուղատնտեսությամբ: Վերջին մեկ տարվա ընթացքում զարմանալի արագությամբ աճում է ծնունդների թիվը, ավելացել է նաեւ վերաբնակեցվածների թիվը: Այս ամենի համատեքստում կարելի է եզրակացնել, որ Քաշաթաղում կյանքը կամաց-կամաց սկսում է ընթանալ իր բնական հունով: ԼՂՀ Քաշաթաղի շրջանի վարչակազմի ղեկավար **Կամո Մարտիրոսյանը** նկատում է, որ կառավարությունը մի շարք ծրագրեր է մշակել, որպեսզի բնակիչները չլքեն տարածքը:

«Արտոնությունները ներկայանում են նպաստների, վարկավորումների տեսքով, որպեսզի գյուղացին կարողանա աշխատել ու գոնե ապրուստի խնդիր չունենա: Քաշաթաղում բուժօգնությունն անվճար է, վերջերս են բնակավայր այցելել Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի բժիշկներ, կատարել բժշկական զննումներ»: Թեպետ Կամո Մարտիրոսյանը լավատես է, սակայն հավելում է, որ բնակավայրում կան բազմաթիվ խնդիրներ, որոնք մտահոգում են Ղարաբաղի իշխանություններին: «Առաջնահերթ խնդիրը բնակարաններ տրամադրելն է, կյանքի համար նորմալ պայմաններ ապահովելը: Մշակվել է շինանյութերի հատկացման ծրագիր, շուտով մի շարք բնակավայրերում կսկսվի շինարարությունը: Կարեւորագույն է նաեւ ճանապարհների հարցը: Շուտով կսկսվեն Բերձոր-Իշխանաձոր ճանապարհի վերանորոգման աշխատանքները: Հեռանկարային է նաեւ այլ գյուղերի հետ ճանապարհների բարեկարգումը: Գյուղացու հիմնական խնդիրը ոռոգման ջրի բացակայությունն է: Թեպետ այստեղ եղանակը համեմատաբար մեղմ է, սակայն ամռան ամիսներին անձրեւներ հազվադեպ են պատահում, ոռոգման ջուրն էլ բավարար չէ արտերը մշակելու համար»:

Կամո Մարտիրոսյանի խոսքերով՝ ուշադրություն են դարձնում ջրանցքների կառուցմանը՝ ոռոգման եւ մաքուր ջրի պահպանման համար: Կան 217 մ երկարությամբ հողային ջրանցքներ, որոնք տասնյակ տարիներ չեն մաքրվել: Շրջանի իշխանությունների օրակարգում է նաեւ այդ խնդրի չեզոքացումը:



## Հանուն լուսավոր ապագայի

Քաշաթաղի երկրագիտական թանգարանը հիմնադրվել է 1995-ի մայիսի 18-ին: Որը խորհրդանշական է: Ազատագրվել է նաեւ Լաչինը: Այժմ Լաչինը վերագտել է իր պատմական անունը՝ Բերձոր, սակայն պաշտոնական արձանագրություններում շարունակում է մնալ Լաչին, թարգմանաբար նշանակում է «սպիտակ արծիվ»: Թանգարանի հիմնադրման գլխավոր նպատակն է հայագիտական, ազգագրական ցուցանմուշներով ապացուցել, որ Բերձորը հայկական հնագույն բնակավայր է: Մի շարք սեպագիր արձանագրություններ ասվածի լավագույն ապացույցն են:

Թանգարանը, ինչպես հավաստիացնում է տնօրեն **Լիվեռա Հովհաննիսյանը,** գոյատեւում է հավաքչական աշխատանքների միջոցով: Հիմնադրման ժամանակ թանգարանի աշխատակիցները շրջել են ողջ բնակավայրով, պեղումներ կատարել: Հնագետների աշխատանքով տարեցտարի ավելանում է թանգարանի ցուցանմուշների թիվը: «Պեղումներով հայտնաբերվեցին մ.թ.ա. 5.000 տարվա պատմություն ունեցող դամբարանի եզակի ցուցանմուշներ: Ներկայացված է կուր-արաքսյան մշակույթը, որը հին հայկական մշակույթի առանձնահատկություններից է»:

Երկրագիտական թանգարանը բաժանված է երեք մասի՝ հնագիտական, պատկերասրահ եւ փառքի սրահ:

Հնագիտական իրերի ցուցասրահում առանձնանում են հայկական հնագույն գորգերը, կարպետները, դրամները, 19-րդ դարի թասերը, սափորներն ու գավերը:

«1907-ին թուրքերի ջարդարարության ժամանակ Բերձորում ապրող բնակչության մեծ մասը հեռացավ Ստեփանակերտ, որի ապացույցները ներկայացված են թանգարանում: Ղարաբաղյան պատմության մեջ առանձնահատուկ նշանակություն ունի Ծիծեռնակավանքը: Ըստ պատմության, 4-րդ դարում կառուցված եկեղեցում է թաղված Պետրոս առաքյալի ճկույթը», նկատում է թանգարանի տնօրենը:

Պատկերասրահը հիմնվել է Հայաստանի նկարիչների միության ջանքերով: Ներկայացված են Կարեն Աղամյանի, Վահե Թոփմաջյանի ու էլի մի քանի տասնյակ ստեղծագործողների աշխատանքները: Պատկերասրահի աշխատակիցները հավաստիացնում են, որ Ղարաբաղ այցելող յուրաքանչյուր զբոսաշրջիկ անտարբեր չի անցնում թանգարանի կողքով: Դա է վկայում մաղթանքներով լի տպավորությունների գիրքը:

Փառքի սրահը 20-ամյա հանրապետության ամենացավալի ու հաղթական էջերի փոքրիկ ամփոփումն է: Զոհված ազատամարտիկների լուսանկարներ, նամակներ ռազմաճակատից, բանաստեղծություններ, որտեղ ընդգծված են յուրաքչյուր զինվորի անհատականությունն ու հայրենասիրությունը:

Թանգարանին կից գործում է Քաշաթաղի գրադարանը: Ընդամենը երկու սենյակում իրենց հող ու ջրին հավասարիմ մարդկանց մի խումբ գրադարան է ստեղծել, այստեղից-այնտեղից գրքեր ու կահույք ճարել: 11-ամյա կենսագրություն ունեցող գրադարանն այսօր ունի 11.000 կտոր գիրք ու 900 ընթերցող: Աշխատակիցները խոստովանում են, որ յուրաքանչյուր ձեռք բերած գիրք, թերթ ու ամսագիր իրենց մեծագույն ուրախություն է պատճառում: Մի քանի օր առաջ գրադարանում կրկին ուրախանալու առիթ կար: 40.000 դրամ արժողությամբ գրքերը համեստ բնակավայրի համար մեծ ձեռքբերում էին:

Ցավոք, այստեղ պայմաններն այն չեն: Ընթերցասրահ չկա, գրքերը կուտակվում են, սակայն դրանք դասավորելու տեղ չկա: Շենքային պայմաններն էլ բավարար չեն: Հատկապես դժգոհ են ջեռուցումից: Էլեկտրական փոքրիկ սալիկներով ձմռանը մի կերպ տաքացնում են սենյակներն ու «յոլա գնում»՝ ուրախանալով յուրաքանչյուր գրքով կամ նոր ընթերցողով:

Նրանց կյանքն էլ այսպես է շարունակվում. պատերազմը չեն մոռացել, ապրում են անհանգստությամբ: Ադրբեջանից ստացվող յուրաքանչյուր ռազմատենչ արտահայտություն մտահոգում է, պատերազմ չեն ցանկանում, սակայն եթե կրկին հնչի արկերի ձայնը, պատրաստ են պայքարել մինչեւ վերջին շունչը: Իսկ այժմ, թեկուզ դժվար պայմաններում, կրթում են երիտասարդ սերնդին:



*Լուսանկարները՝ Panarmenian photo-ի*

### «Յուրաքանչյուր տղամարդ պետք է ծառայի հանուն հայրենիքի»

Առօրյա հոգսերով է օրն անցնում Քաշաթաղի եղբայրասիրաց գիշերօթիկ հաստատությունում: Հիմնադրվել է 1995-ի նոյեմբերին: Այժմ գիշերօթիկի փոքրիկ բնակիչներն են Արմենը, Աշոտը, Անին ու էլի 10 երեխաներ. հիմնականում միակողմանի ծնողազուրկ: Սա Քաշաթաղի եզակի հաստատություններից է, որտեղ նյութական խնդիրներ չկան:

Մեր այցելության ժամանակ երեխաները հանդեսի վերջին փորձն էին անցկացնում: Ցանկանում էին լավ տպավորություն թողնել Երեւանից ժամանած հյուրերի վրա եւ հենց այդ պատասխանատվության զգացումից էլ հուզվում էին:

16-ամյա **Արմենի** հետ զրույցը կարճ տեւեց. դեռ պետք է բանաստեղծությունը կրկներ: Զոհված ազատամարտիկի տղա է, հայրը մահացել է 1994-ի մարտերի ժամանակ: Հոր ու պատերազմի մասին խոսել չի ցանկանում, սակայն վստահ է, որ յուրաքանչյուր տղամարդ պետք է ծառայի հանուն հայրենիքի:

Հորը չի հիշում, տեսել է միայն լուսանկարներում, սակայն հավաստիացնում է, որ դա է հոր պատգամը:

**ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
**Քաշաթաղ-Երեւան**

# Մեկնարկեց ՀԲԸՄ «Անդրանիկ» երկրորդ սկաուտական ճամբարը



Հայկական բարեգործական ընդհանուր միության «Անդրանիկ» սկաուտական ճամբարը, երկրորդ տարին անընդմեջ, տեղի է ունենում Հայաստանում: Միության հայաստանակենտրոն երիտասարդական տարբեր ծրագրերին մաս կազմող սկաուտական ճամբարը մեկնարկեց հուլիսի 15-ին, Լոռու մարզի Լերմոնտովո գյուղում գտնվող միության ճամբարում: Ինչպես նախորդ տարի, այս տարի նույնպես, սկաուտական ճամբարին մասնակցելու նպատակով Հայաստան են ժամանել միության Իրանի, Իրաքի, Սիրիայի, Լիբանանի ու ԱՄՆի մասնաճյուղերը ներկայացնող յոթ քաղաքների շուրջ 300 սկաուտներ ու արենուշներ: Ճամբարին կմասնակցեն նաեւ ՀԲԸՄ Հայաստանի սկաուտական շարժման խմբի անդամները: «Անդրանիկ» սկաուտական ճամբարի պատասխանատուն է ՀԲԸՄ-ՀԵԸ Լիբանանի վարիչ-քարտուղար Գեւորգ Սանթուրյանը:

Հուլիսի 15-ին կայացած ճամբարի բացման արարողությունն սկսվեց Գուգարաց թեմի Տավուշի փոխառաջնորդ Սասուն ծ. վարդապետի աղոթքով, որ կատարեց նաեւ հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Թեհրան-Երեւան չվերթն իրականացնող ինքնաթիռի աղետի զոհերի, որոնց շարքում էին նաեւ արենուշներ Շողեր եւ Նաիրի Ստեփանյան քույրերը: Լոռու մարզի համայնքային իշխանությունների, Գուգարաց թեմի հոգեւորականների, ինչպես նաեւ ՀԲԸՄ պատասխանատուների ու Երեւանից ժամանած բազմաթիվ հյուրերի մասնակցությամբ կատարվեց դրոշակների բարձրացման արարողություն: Տողանցեցին մասնակից սկաուտական խմբերը:



Տարբեր երկրներից ժամանած ՀԲԸՄ սկաուտներն ու արենուշները, բացի սկաուտական կյանքի առօրյայից ու դաստիարակչական զրույցներից, կշրջեն նաեւ Հայաստանի տեսարժան վայրերում, կայցելեն Մայր աթոռ Ս. Էջմիածին, ներկա կլինեն համերգների ու կծանոթանան Հայաստանի պատմական հուշարձաններին:

AZG NEW 5.QXD 7/20/2009 10:01 PM Page 1



# «Մեռյալ ծովի ձեռագրերում» միասնության դասեր չկան

***Անգլիական «Ինդիփենդենթ» թերթի Մերձավոր Արեւելքի երկրներում երկարամյա թղթակից Ռոբերտ Ֆիսքն իր հերթական սյունակը նվիրել է Մեռյալ ծովի արեւմտյան ափի երկայնքով, քարայրներում գտնված եբրայերեն, արամեերեն, նաբաթեերեն, հունարեն, լատիներեն եւ ասորերեն ձեռագրերին: Զանազան վայրերում գտնված այդ ձեռագրերը տարբերվում են բովանդակությամբ եւ ստեղծման ժամանակով: Առանձնապես արժեքավոր են Վադի Կումրան շրջանում հայտնաբերվածները: Մեծ մասամբ չհրատարակված այդ հնագույն ձեռագրերը պատկանել են Հուդայի անապատում միայնացած համայնքի աղանդավորներին, որոնք հակադրվել են հուդայական պաշտոնական կրոնին:***

Վերջապես տեսա Մեռյալ ծովի ձեռագրերը: Երկու հազար տարի առաջ մագաղաթի եւ պապիրուսի վրա գրված, այժմ ապակեծածկ դարակների վրա ցուցադրված այդ գրական կոթողները աշխարհում գոյություն ունեցող ամենանշանակալի արձանագրություններն են: Դրանցից որոշ հատվածներ ընդգրկվել են Հին Կտակարանի նախականոնական տարբերակներում: Հավատալու համար պետք է տեսնել դրանք: Ես եբրայերեն չեմ կարող կարդալ: Ոչ էլ հին հունարեն կամ արամեերեն ու ասորերեն, որոնցով գրված են այդ ձեռագրերի արձանագրությունները: Բայց որոշ տառեր ծանոթ են ինձ արաբերենից, ինչպես, օրինակ, «սինը» (ս-ն) եւ «միմը» (մ-ն):

Ձեռագրերի հայտնագործությունը, իհարկե, քաջածանոթ է շատերին: Մոհամմեդ էլ Դիբ անունով մի բեդվին 1947-ին գտել է դրանք այժմյան պաղեստինյան գրավյալ տարածքի արեւմտյան ափում գտնվող Խիրբեթ Կումրան հովտի քարանձավներից մեկում: Նա հանձնել է այդ ձեռագրերը Երուսաղեմում մի հնակարկատի, որը հետագայում դարձել է հազվագյուտ, անտիկ իրեր վաճառող: Նրա անունը Խալիլ Իսկանդար Շահին է եղել: Որոշ ժամանակ անց դրանք հայտնվել են Երուսաղեմի հորդանանյան հատվածում գործող հիմնականում ամերիկացի ուսումնասիրող-գիտնականների ձեռքերում: Այնուհետեւ՝ 1967-ի պատերազմի օրերին իսրայելական բանակը հայտնվել է Երուսաղեմի այդ արեւելյան հատվածում եւ... մնացածը կարելի է պատկերացնել:

Ես այդ բնագիր տեքստերը տեսա Տորոնտոյում բացված Օնտարիոյի Արքայական թանգարանում, եւ իմ մեջ առաջացան բազմաթիվ հարցեր: Դրանցից մեկն առնչվում էր Կանադայի մեղմ վերաբերմունքին ընդհանրապես այն ամենին, ինչը կարող էր վիճելի լինել: Իսրայելի հնությունների վարչության արհեստավարժ օժանդակությամբ կազմակերպված ցուցահանդեսի ոչ մի բաժնում նշված չէր, թե ինչպես էին այդ կարեւոր փաստաթղթերը հայտնվել իսրայելցիների ձեռքերում: Կանադացիները, ովքեր պետք է մինչեւ օրս սովորած լինեին, որ ճշմարտությունը թաքցնելը լավ բանի չի հանգեցնի, այնքան զգուշավոր էին, որ նույնիսկ չէին նշել, որ Կանդոն՝ ձեռագրերն առաջինը ընդունողը, հայ է եղել: Չէին նշել, որովհետեւ այդ դեպքում պարտավորված կլինեին բացատրել, թե ինչպես է այդ հայը հայտնվել Երուսաղեմում, մի հարց, որ առաջնորդելու էր խոսելու 1915 թվի հայկական Հոլոքոսթի եւ մեկուկես միլիոն հայերի կոտորածների մասին Օսմանյան Թուրքիայում:

Դա, անշուշտ, կբարկացներ Կանադայում ապրող թուրքական համայնքի անդամներին, որոնք Հայկական Հոլոքոսթը ժխտողներից են, ուրացողներ: Դա կբարկացներ նաեւ Իսրայելի հնությունների վարչությանը, որը նույնպես չի ընդունում, որ նման ջարդ տեղի է ունեցել հայերի հետ: Նրանց համար միայն մեկ իսկական Հոլոքոսթ գոյություն ունի, եւ դա Եվրոպայի հրեաների ջարդն է գերմանացի նացիստների կողմից: Հրեական Հոլոքոսթը հաստատված փաստ է, մինչդեռ՝ հայկականը, ըստ նրանց, վիճելի է: Եվ այդ հարցը չի կարելի քննարկել Կանադայում: Ոչ էլ Ամերիկայում, որտեղ Օբաման անցյալ ապրիլին անամոթաբար չօգտագործեց «ց» (եղասպանություն) բառը:

Կանադացիներն այդ ամբողջ միջոցառումը ներկայացրել էին որպես երեք՝ հրեական, քրիստոնեական եւ մահմեդական կրոնների «միասնության» կոչ: Բայց ձեռագրերն արաբերեն չեն, եւ մահմեդականության մասին խոսք լինել չէր կարող: Կազմակերպիչները դրա փոխարեն մոտ 200 տարվա հնության Ղուրան էին ցուցադրել թանգարանի գրադարանից վերցված իսլամի վերաբերյալ մի քանի այլ գրքերի հետ: Ըստ թանգարանի տնօրեն Ուիլյամ Թորսելի՝ «ցուցահանդեսը դուռ է բացելու միջհավատամքի քննարկումների»: Բայց...

Ցուցահանդեսի ընթացքում ցուցադրվող տեսաֆիլմերի մեծամասնությունը հստակ քարոզչություն է տարածում, որ Հուդայի թագավորության տարածքն ու Սամարիան՝ Իսրայելի թագավորության մայրաքաղաքը, հիմնված մ. թ. ա. մոտ 876-ին (Հարավային Պաղեստին, որն առավելապես մեզ հայտնի է Արեւմտյան ափ անունով), հրեական բնօրաններ են եղել: Տարիներ առաջ, երբ ես խոսում էի մի խումբ իսրայելցիների հետ, հասկացա, որ նրանք Թել Ավիվի, միջազգայնորեն ճանաչված Իսրայելի պետության հետ հավասարապես Արեւմտյան ափն ու նույնիսկ Գազայի հատվածն են ցանկանում իրենցը համարել եւ պահպանել այն «պատճառաբանությամբ, որ Տիրոջ հրամանով կետը Հովնանին այդ վայրում փսխեց» (Մարգարէութիւն Յովնանու, գլուխ Բ):

Անշուշտ, նման պահանջներ ցուցահանդեսը չի ներկայացնում: Այն վերնագրված է «Խոսքեր, որոնք փոխեցին աշխարհը» բառերով եւ «Պատմական գանձեր տեսնելու եզակի հնարավորություն» կոչով: Բայց Կանադայում գործող «Կոալիցիա ընդդեմ իսրայելական խտրականության» խմբավորումը բողոքում է թանգարանի դեմ՝ ասելով, որ իրավունք չունի ցուցադրելու «թալանված» իրեր: Նրանք պնդում են, որ ձեռագրերը, որոնք սկզբնական շրջանում եղել են հորդանանյան հնությունների պաշտպանության վարչության եւ «Էկոլ Բիբլիկ Ֆրանսեզի»՝ ֆրանսիական ավետարանական դպրոցի ձեռքերում, հետագայում անօրինական ձեւով առգրավվել եւ տեղափոխվել են Իսրայել 1967-ին: Պաղեստինյան իշխանությունները միացել են բողոքի ակցիային: Որպես հետեւանք թանգարանի պատասխանատուները հրաժարվել են հարցազրույցներ տալ լրագրողներին:

Իմ տպավորությունն այն է, որ թանգարանն ունի ցուցադրվող իրերի օրինականությունը հաստատող որոշ փաստաթղթեր, բայց չի ցանկանում հրապարակել դրանք: Ոչ էլ ՅՈՒՆԵՍԿՕ-ին է դիմում այդ հարցով: Եվ մենք տեսնում ենք «միասնության» հրաշալի մի դրսեւորում:

Հավանաբար նույն վիճելի հարցադրումները պիտի առաջանային, եթե, ասենք, Սաուդյան Արաբիայի կառավարությունը Տորոնտոյում կազմակերպեր իսլամական գանձերի ցուցահանդես: Այնտեղ, վստահ եմ, չէր խոսվելու Արաբիայում մի ժամանակ գոյություն ունեցող հրեական մեծ համայնքի մասին, ինչպես թուրքական մի ցուցահանդեսի ժամանակ չէր խոսվելու Թուրքիայի պատմությանը հայերի բերած նպաստի մասին: Այնպես որ, մտածում եմ, արդյոք այս թանկարժեք փաստաթղթերի «ճամփորդությունն» աշխարհով մեկ արդարացվա՞ծ է: Իրո՞ք այն ծառայելու է միասնության հաստատմանը:

**Թարգմ. Հ. Ծ.**

# Օրտեգան ուզում է փոխել սահմանադրությունը

**Նիկարագուայի նախագահ Դանիել Օրտեգան որոշել է սահմանադրական հանրաքվե անցկացնել, որպեսզի ինքը վերընտրվելու հնարավորություն ստանա: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:**

**Հանրաքվե անցկացնելու իր մտադրությունը Օրտեգան հրապարակել է սանդինիստական հեղափոխության 30-ամյակին նվիրված հանրահավաքում: Օրտեգան 1979 թ. այդ հեղափոխության առաջնորդն է:**

**Ֆրանսպրեսը հիշեցնում է, որ Օրտեգայի քաղաքական մերձավորագույն դաշնակիցները՝ Վենեսուելայի, Բոլիվիայի եւ Էկվադորի նախագահները, վերջերս անցկացրել են հանրաքվեներ եւ ստացել վերընտրվելու իրավունք:**

**Մինչդեռ հունիսի վերջերին սահմանադրական հանրաքվե անցկացնելու Հոնդուրասի նախագահ Մանուել Սելայայի համանման փորձը ավարտվեց պետական հեղաշրջմամբ:**



**Դանիել Օրտեգան Նիկարագուայի ղեկավարն է եղել 1985-1990 թթ.: 2006 թվականին նա կրկին զբաղեցրեց պետության բարձրագույն պաշտոնը: Գործող սահմանադրության համաձայն, միեւնույն անձը չի կարող երկու անգամ անընդմեջ զբաղեցնել նախագահի պաշտոնը:**

ՍՏԻՊԵԼ ԵՆ ԹԱԼԻԲՆԵՐԸ

# Աֆղանստանում գերված զինվորը ԱՄՆ-ին կոչ արեց դուրս բերել զորքը

## *Եվս երկու խաղաղ զոհ*



**Այս տարվա հունիսի 30-ին Աֆղանստանի արեւելքում «Թալիբան» շարժման գրոհայինները գերի էին վերցրել մի ամերիկացի զինծառայողի, որի անունը չէր հրապարակվել: Եվ ահա երեկ Պենտագոնը հայտարարեց, որ գերի զինծառայողը 23-ամյա շարքային Բոուի Բերգդալն է Այդահոյի նահանգից:**

**Ռոյթեր գործակալությունը հաղորդում է, որ ավելի վաղ՝ հուլիսի 18-ին թալիբները հրապարակել էին Բերգդալի տեսագրված ելույթը: Հուլիսի 14-ին կատարված տեսագրության մեջ գերի զինծառայողը ԱՄՆ-ին կոչ է անում զորքը դուրս բերել Աֆղանստանից:**

**Աֆղանստանում ծառայող ամերիկացի բոլոր զինվորականների անունից ԱՄՆ ղեկավարությանը դիմելով՝ նա խնդրում է ամերիկացիներին վերադարձնել հայրենիք:**

**Թալիբները պնդում են, թե գերին հայտնել է իր անունը, բայց համացանցում հայտնված տեսահոլովակում Բերգդալը չի ասում իր անունը. միայն ցուցադրվում է նրա ինքնությունը հաստատող կտրոնը: Այս կապակցությամբ ԱՄՆ իշխանությունները հայտարարել են, որ դա միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում է:**

**Ինչ վերաբերում է Աֆղանստանի մյուս դեպքերին, գերմանական ARD հեռուստաալիքը հաղորդում է, որ գերմանացի զինծառայողները գնդակահարել են երկու խաղաղ աֆղանների, երկու ուրիշների էլ վիրավորել են:**

**Գերմանացիները կրակ էին բացել մեծ արագությամբ հուկիչ անցակետին մոտեցած մի ավտոմեքենայի վրա: Վարորդը ուշադրություն չէր դարձրել նախազգուշական կրակոցներին:**

**Գերմանիայի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը հայտարարել է, թե գերմանացի զինծառայողները կրակել են մեքենայի անվադողերի վրա: Սակայն ուղեւորներից մեկը՝ մի դեռահաս տղա, տեղում սպանվել է, իսկ մյուս ծանր վիրավորը մահացել է հիվանդանոցի ճանապարհին: Երկու ուղեւորներ էլ վիրավորվել են:**

**Աֆղանստանում տեղաբաշխված է Բունդեսվերի 3700 զինծառայող: Հուլիսի սկզբներին Բունդեսթագը որոշեց այդ երկրում գերմանական զորաբաժնի ներկայությունը երկարաձգել մինչեւ դեկտեմբերի 13-ը, իսկ զինծառայողների թիվը հասցնել 4500-ի:**

**«Զյուդդոյչե ցայտունգ» թերթի տվյալներով, Աֆղանստանում 2001 թ. ՆԱՏՕ-ի ներխուժումից մինչեւ օրս սպանվել է 35 գերմանացի զինծառայող:**

# Կոնգրեսը կքննարկի ԿՀՎ գաղտնի ծրագրերի հարցը

**ԱՄՆ Կոնգրեսի ստորին պալատի հետախուզության գործերի հանձնախմբի նախագահ Սիլվեստր Ռեյեսը հայտարարել է, որ մտադիր է անցկացնել քննություն, որպեսզի պարզվի, թե ԿՀՎ գաղտնի ծրագրերը որքանով են հայտնի օրենսդիրներին:**

**Քննության անցկացումը պայմանավորված է վերջերս հրապարակված այն տեղեկություններով, որ ԿՀՎ-ն ահաբեկիչների ոչնչացմանն ուղղված իր գաղտնի նախագծի մասին չի տեղեկացրել Կոնգրեսին: Մասնավորապես 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից անմիջապես հետո մշակվել էր «կործանիչ ջոկատների» ստեղծման ծրագիր: Դրա մասին ԿՀՎ-ն Կոնգրեսին չէր տեղեկացրել ԱՄՆ այն ժամանակվա փոխնախագահ Դիկ Չեյնիի ցուցումով:**

**2004-ին ԿՀՎ տնօրեն Ջորջ Թենեթը որոշել էր փակել ծրագիրը, բայց այն վերաբացվել էր հաջորդ տնօրեն Պորտեր Գոսսի օրոք եւ շարունակվել Մայքլ Հեյդենի օրոք:**

**Գաղտնի նախագծի գոյության մասին առաջին անգամ հայտնի դարձավ 2009-ի հուլիսին: Այդ մասին նախագահ Բարաք Օբամային պատմեց ԿՀՎ նորանշանակ տնօրեն Լեոն Պանետտան: Ծրագրի հետ կապված տվյալների հրապարակումից հետո Պանետտան փակեց այն:**

# Ծխելու արգելք Թուրքիայի բարերում ու ռեստորաններում

Թուրքիայում ուժի մեջ է մտել բարերում, սրճարաններում եւ ռեստորաններում ծխելու արգելքը: Ֆրանսպրեսը նշում է, որ այդ հաստատությունների ղեկավարներն այսուհետեւ կարող են չսպասարկել ծխելու մտադրություն ունեցող հաճախորդներին: Ծայրահեղ դեպքերում ծխողին կարող են հանձնել ոստիկանությանը:

Արգելքը խախտողները կտուգանվեն 69 լիրա (մոտ 45 դոլար): Իսկ ծխողներին ընդառաջող հաստատությունները ենթակա են անհամեմատ մեծ տուգանքների՝ 560-ից մինչեւ 5600 լիրա:

Ավելի վաղ՝ 2008-ին թուրքական իշխանությունները ծխելու արգելք էին հաստատել աշխատատեղերում:

Երբ բարերում ու սրճարաններում ծխելու արգելքի հարցը դեռ քննարկվում էր, այդ հաստատությունների տերերն առաջարկել էին ստեղծել ծխողների եւ չծխողների հարկաբաժիններ, բայց իշխանությունները զիջումների չէին դիմել:

Սրճարանատերերի ընկերակցությունը մտադիր է դատարանում գանգատարկել հաստատված արգելքը: Ընկերակցության ղեկավարներից մեկի խոսքերով, սրճարանների հաճախորդների 95 տոկոսը կազմում են ծխողները: Ուստի ենթադրվում է, թե հաճախորդների թիվը կնվազի, եւ կփակվեն շատ սրճարաններ:

Ըստ պաշտոնական վիճակագրության, Թուրքիայում ծխողները կազմում են չափահաս բնակչության մեկ երրորդը: Ծխում է տղամարդկանց 50 տոկոսը: Ծխելու հետ կապված հիվանդությունների հետեւանքով ամեն տարի երկրում ավելի քան 100 հազար մարդ է մահանում:

# Գաբրիել Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի պրեմիերաները

... Գիտափորձերին հետեւելը միշտ էլ հետաքրքրական է: Չէ՞ որ ամեն դեպքում դրանք կապված են շարժման, փոփոխությունների հետ, ինչպես բուն կյանքը, որտեղ անդադար ինչ-որ բան փոխվում է, իսկ վերջում մնում է կենսունակության փորձությունն անցած մի որոշակի բան: Եվ ահա Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում էլ այսօր յուրօրինակ գիտափորձ է. տեղի է ունենում թատրոնի ղեկավարման նոր ոճի ստուգում: Արդեն մեկ տարի այստեղ չկա գլխավոր բեմադրիչ կամ գեղարվեստական ղեկավար: Նրա փոխարեն թատրոնի քաղաքականությունը եւ բոլոր որոշումները իրականացնում է գեղարվեստական խորհուրդը, որը կազմված է 15 մասնագետից, իսկ նախագահը ՀՀ մշակույթի փոխնախարար Դավիթ Մուրադյանն է: Ինչպե՞ս եւ ինչի՞ վրա է աշխատում թատրոնը ընթացիկ թատերաշրջանում: Ո՞ր ներկայացումների պրեմիերաները կտեսնի հանդիսականը: Այդ մասին պատմում են թատրոնի գեղարվեստական խորհրդի անդամ, թատրոնի տնօրեն Ստեփան Դավթյանը եւ Հայաստանի վաստակավոր արտիստ, ստեղծագործական հարցերի համակարգող Ռազմիկ Խոստրովը:

**Ստեփան Դավթյան**. «Գեղարվեստական խորհուրդը, ինչպես եւ թատրոնը, աշխատում է շատ ինտենսիվորեն, քանի որ բոլոր որոշումները ընդունվում են կոլեգիալ կերպով, ամեն տեսակ հարցերի նկատմամբ մոտեցումը մանրակրկիտ է եւ անաչառ: Խորհուրդը ընտրում է պիեսները, հաստատում պատրաստվելիք ներկայացումը բեմադրիչին: Իսկ ֆինանսական հարցերը լուծում են տնօրենը եւ մշակույթի նախարարությունը: Թատրոնն աշխատում է մեծ բեռնվածությամբ, ներկայացումների մեծ մասը մասշտաբային է: Ֆինանսները հատկացնում է նախարարությունը: Բացի դրանից, ունենք նաեւ սեփական բյուջե: Սա Հայաստանում միակ թատրոնն է (բացի Հ. Թումանյանի անվան տիկնիկայինից), որն արդեն 4 տարի անընդմեջ կատարում է հաճախումների պլանը, իսկ վերջին 3 տարիներին՝ նույնիսկ գերակատարում: Գեղխորհուրդը որոշել է այս տարի իրականացնել 4 նոր ներկայացում: Դրանցից մեկն արդեն հանձնվել է փետրվարին՝ Բեռթոլդ Բրեխտի «Կովկասյան կավճի շրջանն է». բեմադրիչը՝ Տիգրան Գաստարյանը: Թատերաշրջանի երկրորդ պրեմիերան դարձավ ներկայացումը, ըստ Ֆրիդրիխ Դյուրենմաթի «Ծեր տիկնոջ այցը» պիեսի. բեմադրիչը իր ստեղծագործությամբ հայտնի Վահե Շահվերդյանն է: Նա 13 տարի եղել է մեր թատրոնի գլխավոր բեմադրիչը: Այդ ներկայացումով մենք նշեցինք Վարդուհի Վարդերեսյանի՝ ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհու եւ մեր սիրելի դերասանուհու ծննդյան հոբելյանը: Արդեն աշխատանք է կատարվում դարձյալ պրեմիերայի մյուս ներկայացումների վրա («Մուսա լեռան 40 օրը», բեմադրիչ Արմեն Էլբակյան, Վ. Շեքսպիրի «Մակբեթ», բեմադրիչ Վահան Բադալյան): Նաեւ տեղի կունենա «Մեղր» ներկայացման պրեմիերան ըստ Տոնինո Գուեռրայի պիեսի (հրավիրյալ բեմադրիչ Արմեն Մազմանյան)»:

**Ռազմիկ Խոստրով.** «Կուզենայի ընդգծել բեմադրիչների աշխատանքը պրեմիերային ներկայացումներում: Խոսքը հատկապես Վարդուհի Վարդերեսյանի հոբելյանի առթիվ բեմադրված ներկայացման մասին է: Չէ՞ որ նա Հայաստանում ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհու կոչում ունեցող միակ դերասանուհին է: Ամենքին տրված չէ այդ տարիքում խաղալ գլխավոր դեր եւ խաղալ այնպես, որ հանդիսականները զմայլվեն: Դա շատ դժվար է նույնիսկ ֆիզիկապես, բայց Վարդերեսյանն այդ արեց այնքան սքանչելի կերպով, որ ներկայացումը դարձավ հայ մեծ դերասանների արվեստի շարունակությունը: Նա թատերական կյանքի մեծ դպրոց է անցել, եւ թատրոնի երիտասարդների համար նրա խաղը վարպետության դաս է: Նրա ամուսնու դերակատար Կարեն Ջանգիրովը իր ամբողջ տաղանդով այդ կերպարին մոտեցել է շատ նրբորեն եւ փիլիսոփայորեն: Իսկ Ազատ Գասպարյանը քաղաքապետի դերում ստեղծել է հիանալի ողբերգակատակերգական կերպար: Ներկայացման բեմադրիչ Վահե Շահվերդյանը, որը Հայաստանում հայտնի է որպես ներկայիս առաջատար բեմադրիչներից մեկը, կարողանում է դասական գործը հիանալիորեն ընթերցել ժամանակակից ձեւով: Իսկ այդ պիեսում շատ այժմեական են հնչում գործող անձանցից մեկի՝ գիմնազիայի տնօրենի (Հայաստանի վաստակավոր արտիստ Ռ. Խոստրով) խոսքերը. «Մեր իդեալները, որոնք սովորեցրել ենք նաեւ մեր զավակներին, անհետացել են: Հիմա փողը ամեն ինչ է, փողը գլխավորն է»: Ներկայացման մեջ նոր ամպլուայով հաջողությամբ հանդես եկան ոչ միայն Կարեն Ջանգիրովը եւ Ազատ Գասպարյանը, այլեւ Ռազմիկ Խոստրովը եւ Սամվել Փիլոյանը: Այդ ներկայացման հիանալի ձեւավորումը բեմադրող նկարիչ Եվգենի Սոֆրոնովի վերջին աշխատանքն էր, որը շատ ցավալիորեն վերջերս հեռացավ կյանքից: Նա ուներ լավ ճաշակ եւ մեծ վաստակ շատ թատրոններում բեմադրված ներկայացումների ձեւավորման մեջ: Ինչ վերաբերում է ըստ Բ. Բրեխտի պիեսի բեմադրվող «Կովկասյան կավճի շրջանին», այստեղ մի ամբողջ շարք ներկայացումներ (Պերճ Զեյթունցյանի «Կանգնե՛լ, դասարանն է գալիս», Կամյուի «Կալիգուլա», Դոստոեւսկու «Ոճիր եւ պատիժ») բեմադրած Տիգրան Գաստարյանի լավ բեմադրական ղեկավարումից բացի, ուզում եմ հատկապես նշել հիանալի դերասան Արմեն Մարության ստեղծագործական աշխատանքը (նա խաղում է դատավորի դերը), ինչպես նաեւ բանաստեղծի դերակատար Արամ Հովհաննիսյանի, Ալլա Վարդանովայի, երիտասարդ դերասաններ Լուսինե Կոստանյանի, Արաքսյա Մելիքյանի եւ Դավիթ Գաստարյանի աշխատանքը: Նրանց բոլորին մաղթենք ստեղծագործական նոր հաջողություններ:



ԱՆՆԱ ՄԱՐԻՅԱՆ

## «ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»

# Շնորհվեց «Տարվա լավագույն սփյուռքահայ ռեժիսորի մրցանակը»

ՀՀ սփյուռքի նախարար **Հրանուշ Հակոբյանը** ընդունել է **«Ոսկե ծիրան»** միջազգային փառատոնի մասնակից սփյուռքահայ կինոգործիչներին, ժյուրիի անդամներին, կինոարտադրողներին, կինոբեմադրիչներին ու դերասաններին: Նախարարը, ողջունելով հյուրերին, ներկայացրեց նախարարության գործունեությունն ու ծրագրերը, հայրենիք-սփյուռք գործակցության զարգացման պետական քաղաքականությունը: Բարձր գնահատելով «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի դերը մեր մշակութային կյանքում, նախարարը հույս հայտնեց, որ ապագայում եւս այն իր ուրույն տեղը կունենա ոչ միայն Հայաստանի, այլեւ ողջ աշխարհի հայ կինոգործիչների կյանքում:



Կինոփառատոնի տնօրեն **Հարություն Խաչատրյանն** իր եւ փառատոնի մասնակիցների անունից շնորհակալություն հայտնեց Հրանուշ Հակոբյանին՝ հայրենիք-սփյուռք գործակցության զարգացման ոլորտում կատարած հայրենանվեր գործունեության եւ փառատոնին աջակցելու պատրաստակամության համար ու նախարարին նվիրեց աշխարհում ապրող հայերին խորհրդանշող տաղանդավոր արվեստագետ Արա Սարգսյանի հեղինակած մագաղաթե կտավը:

«Ոսկե ծիրան» միջազգային փառատոնի ավարտից հետո ամփոփիչ ասուլիսին նախարարության ներկայացուցիչ **Հակոբ Ասատրյանը** նշեց, որ ՀՀ սփյուռքի նախարարության սահմանած «Տարվա լավագույն սփյուռքահայ ռեժիսոր» «Ոսկե ծիրան» հատուկ մրցանակին ու պատվոգրին է արժանացել իրանահայ ռեժիսոր **Վարուժ Քարիմ-Մասիհին**, փառատոնի «Հայկական համայնապատկեր» խաղարկային ֆիլմերի շարքում ներկայացրած **«Կասկած»** ֆիլմի համար:

Հաշվի առնելով, որ մրցանակակիրը չէր կարողացել ժամանել փառատոնին, մրցանակը նրան կհանձնվի, երբ նա կայցելի Երեւան, տեղեկացրեց Հակոբ Ասատրյանը:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

# Նվիրում Գյուրջիեւին

Երեկ «Նարեկացի» արվեստի միությունում տեղի ունեցավ «Գյուրջիեւը եւ Հայաստանը» խորագրով միջոցառում՝ նվիրված 20-րդ դարի մեծագույն մտածող, աշխարհահռչակ փիլիսոփա, պարուսույց Գեորգի Իվանի Գյուրջիեւին:

«Գյուրջիեւի հայկական ինքնությունը» զեկույցով հանդես եկավ «Գյումրիի Գյուրջիեւյան կենտրոնի» հիմնադիր, պատմաբան Ավետիք Մելիք-Սարգսյանը:

Գյուրջիեւի ֆոլկլորային ստեղծագործությունների կատարմամբ հանդես եկան ժողովրդական նվագարանների համույթը եւ դաշնակահարուհի Լուսինե Գրիգորյանը:

Իսկ ճեմասրահում բացվեց «Անի, Կարս, Ալեքսանդրապոլ» հին լուսանկարների ցուցահանդեսը:

Ս. ՄԱԿԱՐՅԱՆ

# «Սիրո երգի համար եմ եկել»

***Օրերս Կամերային երաժշտության տանը տեղի ունեցավ գրական-երաժշտական գեղեցիկ մի հանդիսություն, որը նվիրված էր բանաստեղծ, թարգմանիչ ԼԵՎՈՆ ԲԼԲՈՒԼՅԱՆԻ ծննդյան 60 ամյակին: Շնորհավորանքի ու գնահատանքի շատ խոսքեր հնչեցին հոբելյարի հասցեին այդ երեկո, համալրվեց նրա պարգեւների թիվը (մշակույթի նախարարության ոսկե մեդալ, Գրողների միության «Վաստակի համար» մեդալ, Լեզվի տեսչության պատվոգիր): Լեփ լեցուն դահլիճում հանրապետության սիրված արտիստների կատարմամբ բանաստեղծը նորովի լսեց տարբեր տարիների իր բանաստեղծություններից, թարգմանություններից, երգիծապատումներից, իր խոսքերով ծնված հին ու նոր երգեր:***

***Շնորհավորելով հոբելյարին՝ տպագրում ենք նրա ավագ գրչընկերոջ խոսքը՝ ասված այդ երեկոյի ժամանակ:***

«Լեւոն Բլբուլյանը 60 տարեկան է: Չեմ ուզում թախծահնչուն բարձրաձայնել, թե այս ե՞րբ անցան տարիները, ե՞րբ նա դարձավ վեց տասը տարեկան եւ որպես մխիթարանք՝ ավելացնել, որ տարիքից ավելի ջահել է երեւում, առույգ է, եռանդուն եւ նման բաներ: Ո՛չ, ինձ համար կարեւորն այն է, որ Լեւոնը ապրել է մտավորականի լիաբուռն, գեղեցիկ կյանքով, իմաստավորել իր ապրած յուրաքանչյուր օրը, աշխատել, ստեղծագործել եւ այսօր մեր անվանի գրողներից մեկն է, որ իրավունք ունի ասելու՝

**Շատ սերեր են կյանքում այս՝ սուտ դուրս եկել,**
**Անթիվ երգեր՝ ամուլ ու փուչ դուրս եկել,**
**Բայց, մեկ է, ինձ թվում է թե այս աշխարհ**
**Ես հենց սիրո, երգի համար եմ եկել...**

Լեւոն Բլբուլյանը հայրենի Գավառի թիվ 1 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվեց եւ ավարտեց Երեւանի Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի մեքենայացման ֆակուլտետը, աշխատանքի անցավ հարազատ քաղաքի «Կամոկաբել» գործարանում: Նա, գուցե նաեւ ծնողները եւ ուսուցիչները դեռեւս չգիտեին կամ երեւի կասկածում էին, որ Լեւոնը «երգի համար է եկել»: Եվ, թերեւս, ժամանակ էր հարկավոր, որպեսզի առաջինը, իհարկե, ինքը, ապա եւ ուրիշները համոզվեին, որ հենց այդպես էլ կա, որպեսզի նա հասկանար ու իր ընթերցողներին էլ հաղորդեր մի կարեւոր ճշմարտություն. ամեն մարդ ողջ կյանքում սովորելու բան է ունենում, սակայն, ինչպես խորապես համոզվել էր բանաստեղծը՝

**Ինձ չասեք նաեւ, թե կարելի է**
**Սիրել եւ կամ թե երգել սովորել...**

Այո, սիրելի Լեւոն, իրավի, սիրել եւ երգել չե՛ն սովորում. դա աստվածատուր է, ի ծնե շնորհ: Դու բնաբուխ բանաստեղծ ես, եւ դրա վկայությունն են «Քեզ սերն է ծնել», «Համբույրի ծաղիկ», «Գաղտնիքների խեցի», «Աներգ օրեր» եւ մյուս բանաստեղծական ժողովածուները՝ ընդհուպ վերջերս լույս տեսած «Քառյակները», որի արժանի գնահատականն էր Հայաստանի գրողների միության Ավետիք Իսահակյանի անվան մրցանակը...

Հիշենք, լավ հիշենք նաեւ, որ Լեւոն Բլբուլյանը միաժամանակ հմուտ ու փորձառու լրագրող է: Նա երկար տարիներ աշխատել է տարբեր թերթերում, իսկ վերջին շրջանում՝ Հանրային ռադիոյի մշակութային ծրագրերի խմբագրությունում: Հիշենք, որ նրա գրչին են պատկանում մեր կյանքի տարբեր ժամանակների կնճռոտ խնդիրներին վերաբերող հարյուրավոր հոդվածներ, հաղորդումներ, որ նա շատ հետաքրքրական, խորն ու տարողունակ հարցազրույցներ է ունեցել բազմաթիվ անվանի մարդկանց հետ, որոնց մի մասը ամփոփող «Ժամանակ եւ դեմքեր» գիրքը ընթերցողական լայն շրջանների գնահատականին արժանացավ: Հիշենք, որ նույն ջերմությամբ ընդունվեցին Քյավառի գրավիչ զվարճապատումների բլբուլյանական մշակումները, որոնք ընթերցողի սեղանին դրվեցին մի քանի ուրախ գրքույկներով՝ «Բոյիդ մեռնեմ» տպավորիչ խորագրի ներքո: Լեւոն Բլբուլյանը պոեզիայի սիրահարներին հայտնի է նաեւ, որպես Վլադիմիր Վիսոցկու, Աննա Ախմատովայի, Վլադիսլավ Խոդասեւիչի, Օլեգ Չեստինսկու եւ այլ հեղինակների բազմաթիվ գործերի հմուտ թարգմանիչ: Իսկ ունկնդիրների մի քանի սերունդ վայելել ու այսօր էլ վայելում է նրա տեքստերով գրված հայ անվանի կոմպոզիտորների հուզական, վարակիչ բազմաթիվ երգերը:



Այո՛, բազմակողմանի է այսօրվա մեր հոբելյարի տաղանդը եւ ստեղծագործական նման առատ բերքով է Լեւոն Բլբուլյանը դիմավորում իր 60-ամյակը: Բայց իմ բազմաշնորհ գրչեղբայրը ինձ համար առաջին հերթին բանաստեղծ է, քնարաշունչ, խոհառատ բանաստեղծ, որ չի կարող ապրել առանց սիրո ու երազանքի: Ահա նրա խոստովանություններից մեկը.

**Փորձեք դուք միայն սեփական հոգով**
**Հոգսերն իմ կշռել, չափել ցավ ու վիշտ,**
**Եվ կհամոզվեք, որ իմ երգերով**
**Խոսում եմ հաճախ եւ ձեր անունից...**

Այո, ինչպես բոլոր իսկական բանաստեղծները, Լեւոն Բլբուլյանը եւս խոսում է շատերիս անունից, հույզեր քաղում իր ու մեր ապրած օրերից, թղթին հանձնում հարազատ ժողովրդի ցավերից, հոգսերից, լուսավոր հավատից հյուսված երգերը, որոնք հիմա, անշուշտ, իրենը չեն միայն: Սրտանց շնորհավորելով սիրելի գրչեղբորս, ստեղծագործական հետագա հաջողություններ, նոր եռանդ ու լիցքեր մաղթելով նրան՝ ուզում եմ հավաստել.

**Պատդ փլել չեն կարող,**
**Ճամփադ ծռել չեն կարող**
**Ինչ որ տերն է պարգեւել,**
**Քեզնից խլել չեն կարող...**

ԼԻՊԱՐԻՏ ՍԱՐԳՍՅԱՆ

# Կհաղթահարվի՞ խորվաթական արգելապատնեշը



Այսօր Հայաստանի բազմակի չեմպիոն «Փյունիկը» չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլի պատասխան հանդիպումը կանցկացնի Զագրեբի «Մաքսիմիր» մարզադաշտում: Խաղը կսկսվի Երեւանի ժամանակով 23.30-ին: Հանդիպումը կսպասարկի Պորտուգալիայի մրցավարական բրիգադը Դուարտե Նունու Պերեյրա Գոմեշի գլխավորությամբ:

Այդ հանդիպումն անցկացվելու է առանց հանդիսականների: ՈւԵՖԱ-ն պատժել է դինամոյականներին իրենց երկրպագուների անզուսպ պահվածքի համար: Ինչ խոսք, դա որոշ առումով ձեռնտու է փյունիկցիներին: Նշենք, որ «Դինամոյի» երկրպագուների մի խումբ ներկա էր թիմերի երեւանյան հանդիպմանը եւ բավական ակտիվորեն աջակցում էր զագրեբցիներին տարբեր վանկարկումներով ու երգերով: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի աջակցություն ցույց կտային խորվաթ ֆուտբոլասերները սեփական մարզադաշտում, եթե նրանց թույլատրեին ներկա գտնվել հանդիպմանը:

Սակայն ֆուտբոլասերները չեն այսօրվա վճռորոշ հանդիպման ելքը որոշողները: Գլխավոր դերակատարները ֆուտբոլիստներն են, որոնց գործողություններով է պայմանավորված, թե թիմերից որ մեկը կշարունակի պայքարը: Երեւանում գրանցված 0-0 հաշիվը փյունիկցիներին որոշ հնարավորություններ է ընձեռում հուսալու հանդիպման բարեհաջող ելքի մասին: Դրա համար նախ անհրաժեշտ կլինի հուսալի գործել պաշտպանությունում ու արդյունավետ խաղ ցուցադրել հարձակման գծում: Անեն դեպքում նույնիսկ ոչ-ոքին (1-1 կամ 2-2) «Փյունիկին» հաջորդ փուլի ուղեգիր կպարգեւի: Իսկ եթե փյունիկցիներին հաջողվի հաղթահարել խորվաթական արգելապատնեշը, ապա թիմը եվրոգավաթներում նվազագույնը եւս 4 խաղ կանցկացնի, քանի որ նույնիսկ 3-րդ փուլում պարտվելու դեպքում «Փյունիկը» պայքարը կշարունակի Եվրոպայի լիգայի խաղարկությունում:

«Փյունիկի» գլխավոր մարզիչ **Վարդան Մինասյանի** կարծիքով, առանց հանդիսականների խաղը կազդի Զագրեբի «Դինամոյի» գործողությունների վրա: Ըստ մարզչի, դժվար կլինի հատկապես առաջին 20 րոպեներին եւ եթե փյունիկցիներին հաջողվի դիմակայել մրցակցին, ապա հետագայում խաղալն ավելի դյուրին կլինի: Նա գտնում է, որ գոլ խփելու դեպքում «Փյունիկը» կարող է ուղեգիր նվաճել: Վարդան Մինասյանն այսօրվա խաղում կողմերի հնարավորությունները հավասար է գնահատում:

Զագրեբի «Դինամոյի» գլխավոր մարզիչ **Կրունոսլավ Յուրչիչը** դեռեւս Երեւանում դիտելով «Փյունիկ»-«Միկա» հանդիպումը, հայտարարել էր, որ հյուրընկալվելիս հաղթելու են ՀՀ չեմպիոնին: Երեւանյան խաղից հետո էլ նա հայտարարել էր, որ իրենք եկել էին հաղթելու, սակայն չկարողացան իրացնել գոլային պահերը: Նա խոստացել է սեփական հարկի տակ անպայման գոլ խփել ու հաղթահարել երկրորդ փուլի արգելքը:

Ինչպես եւ թիմերի երեւանյան խաղում, այսօրվա մրցավեճում էլ հաղթողի հիմնական հավակնորդը Զագրեբի «Դինամոն» է: «Վիվարոն» «Դինամոյի» հաղթանակը գնահատել է ընդամենը 1,12 գործակիցով: Իսկ ահա «Փյունիկի» հաջողության դեպքում խաղադրույքը կավելանա 12,5 անգամ: Ոչ-ոքիի դեպքում գործակիցը 6,7 է:

Եթե «Փյունիկին» չհաջողվի հաղթահարել «Դինամոյի» դիմադրությունը, ապա եվրոմրցաշրջանը հայկական թիմերի համար փաստորեն կավարտվի, քանի որ «Գանձասարը» դեռեւս առաջին խաղից հետո է կորցրել պայքարը շարունակելու բոլոր հնարավորությունները: Հուլիսի 23-ին Երեւանում կայանալիք պատասխան հանդիպումը ձեւական բնույթ է կրելու:

Նշենք, որ 2006-ին չեմպիոնների լիգայի մրցաշարում էլ «Փյունիկն» առաջին խաղում սեփական հարկի տակ ոչ-ոքի (0-0) էր խաղացել Մոլդովայի չեմպիոն «Շերիֆի» հետ: Պատասխան խաղում մեր ֆուտբոլիստները մրցակցին զիջեցին 0-2 հաշվով ու դուրս մնացին հետագա պայքարից:

Հաջորդ տարի թիմի համար առաջին խաղում գրանցված ոչ-ոքին այլ արժեք ունեցավ: Առաջին խաղում Իռլանդիայի «Դերի Սիթիի» հետ հյուրընկալվելիս դարպասները մնացին անառիկ: Իսկ ահա սեփական հարկի տակ «Փյունիկը» հաղթեց 2-0 հաշվով ու մտավ հաջորդ փուլ: Ինչպես կդասավորվեն իրադարձություններն այս անգամ, ցույց կտա այսօրվա հանդիպումը:

# Փաշիկյանը կրկնեց հաջողությունը



**Երկրորդ տարին անընդմեջ Հայաստանի չեմպիոն Արման Փաշիկյանը դարձավ Մարտունիի շախմատի միջազգային մրցաշարի հաղթող: Նա 9 հնարավորից վաստակեց 7 միավոր: Փաշիկյանը մրցաշարի 10 մասնակիցներից միակն էր, որ այդպես էլ պարտություն չկրեց: Նա տոնեց 5 հաղթանակ, 4 պարտիա ավարտեց ոչ-ոքի: Փաշիկյանը հատկապես տպավորիչ խաղաց մրցաշարի 2-րդ կեսում: 6-րդ տուրում հաղթելով Լեւոն Բաբուջյանին, Փաշիկյանը գլխավորեց աղյուսակը եւ մինչեւ վերջնագիծ ոչ մեկին չզիջեց առաջատարի դիրքը: Վերջնագծում Փաշիկյանը 4 անընդմեջ հաղթանակ տոնեց:**

**Հաղթողին ընդամենը կես միավոր զիջեց հունգարացի Ֆերենց Բերկեշը: Վերջինս եւս շատ հաջող խաղաց վերջնագծում: 5-րդ տուրում Փաշիկյանի հետ հաշտություն կնքելուց հետո Բերկեշը 4 անընդմեջ հաղթանակ տոնեց: Ավարտական երկու տուրերում նա պարտության մատնեց ռուսաստանցի Իգոր Լիսիջին եւ Սամվել Տեր-Սահակյանին: Ի դեպ, Սամվելը մինչ այդ չէր պարտվել: Այդ պարտությունը երիտասարդ գրոսմայստերի համար ճակատագրական եղավ, ինչը զրկեց նրան 2-րդ տեղը գրավելու հնարավորությունից: Սամվելը 5 միավորով գրավեց 4-րդ տեղը՝ լրացուցիչ գործակիցներով 3-րդ տեղը զիջելով բելառուսցի Սերգեյ Ժիգալկոյին:**

**Մրցաշարի մյուս մասնակիցների ցուցանիշներն այսպիսին են. Ավետիք Գրիգորյան՝ 4,5, Իգոր Լիսիջ՝ 4, Լեւոն Բաբուջյան, Ջհաո Լի՝ 3,5-ական, Տիգրան Քոթանջյան, Ռինաս Ջումաբաեւ՝ 3-ական: Հարկ է առանձնակի խոսել Լեւոն Բաբուջյանի անհավասար ելույթների մասին: Լեւոնը, որ հաղթող էր ճանաչվել վերջերս Ջերմուկում կայացած մրցաշարում, հաջող մեկնարկեց Մարտունիում: Նա գլխավորում էր աղյուսակը: Սակայն 6-րդ տուրում Փաշիկյանից կրած պարտությունը ճակատագրական եղավ նրա համար եւ կարծես հոգեբանորեն ազդեց շախմատիստի վրա: Բաբուջյանն առաջատարի իր դիրքը զիջեց Փաշիկյանին, որից հետո պարտություններ կրեց նաեւ ավարտական 3 տուրերում:**

# Հաղթողը որոշվեց լրացուցիչ գործակիցներով

**Հունաստանի Իկարիա քաղաքում ավարտված շախմատի մրցաշարում Հայաստանը ներկայացրած Նելլի Աղինյանը 168 մասնակիցների մեջ 5,5 միավորով զբաղեցրեց 38-րդ տեղը: 8-րդ տուրում նա հաղթեց Պանայոտիս Ցիոտրիդիսին, իսկ ավարտական տուրում ոչ-ոքի խաղաց Կոնստանտինոս Կոկոլիասի հետ:**

**Մրցաշարի հաղթողին որոշելու համար հարկ եղավ դիմելու լրացուցիչ գործակիցների օգնությանը: Երեք շախմատիստներ, լեհ գրոսմայստերներ Ռոբերտ Կեմպինսկին, Ալեքսանդր Միստան եւ ռուսաստանցի Եվգենի Վորոբյովը 9 հնարավորից վաստակեցին 7,5-ական միավոր: Լրացուցիչ գործակիցներով հաղթող ճանաչվեց Ռոբերտ Կեմպինսկին, որին հաջորդեցին Ալեքսանդր Միստան ու Եվգենի Վորոբյովը: Ավարտական տուրերում նրանց միջեւ կայացած մրցախաղերը որոշիչ դարձան: 8-րդ տուրում Կեմպինսկին ու Վորոբյովը հաշտություն կնքեցին, իսկ Միստան հաղթեց Ռոբերտ Մարկուսին: Ավարտական տուրում Միստան ու Կեմպինսկին խաղաղ դաշն կնքեցին, իսկ ահա Վորոբյովը հաղթեց Անդրեյ Ռիչագովին ու միավորներով հավասարվեց լեհ շախմատիստներին: 7-ական միավորով 4-6-րդ տեղերը բաժանեցին սերբ Ռոբերտ Մարկուսը, լեհ Պյոտր Բոբրասը եւ չեռնոգորցի Դուշան Լեկիչը:**

# Գաբրիել Սարգսյանը հիանալի է մեկնարկել

**Կոպենհագենում անցկացվող շախմատի միջազգային մրցաշարում, որում հանդես են գալիս 307 շախմատիստներ, հիանալի է մեկնարկել Գաբրիել Սարգսյանը: Նա երեք պարտիաներում էլ հաղթել է իր մրցակիցներին՝ Մորթեն Նիլսենին, Անդերս Նիլսոնին եւ Ջոնաթան Կառլստեդին: Գաբրիելն իր վարկանիշով (2667) մասնակիցների մեջ 4-րդ ցուցանիշն ունի: Նա զիջում է միայն Վլադիմիր Մալախովին (2707), Պետեր Հայնեին (2680) եւ Սերգեյ Տիվյակովին (2674): Մրցաշարն անցկացվում է շվեյցարական մրցակարգով, 10 տուրով:**

# ՖԻԴԵ-ն 85 տարեկան է

**Երեկ լրացավ շախմատի միջազգային ֆեդերացիայի՝ ՖԻԴԵ-ի հիմնադրման 85-ամյակը: 1924-ի ամռանը Փարիզում, օլիմպիական խաղերի ժամանակ, կազմակերպվեց շախմատի ցուցադրական մրցաշար: Օգտվելով դրանից, 16 երկրների ներկայացուցիչները հիմնեցին շախմատային միություն, որը հետագայում վերածվեց ֆեդերացիայի: Ներկայումս ՖԻԴԵ-ն աշխարհի ամենահեղինակավոր մարզական ֆեդերացիաներից մեկն է, որին անդամագրված են 165 երկրներ: Եվս 22-ը ցանկություն են հայտնել դառնալու շախմատային մեծ ընտանիքի անդամ: Իր գլխավոր նպատակներից մեկը ՖԻԴԵ-ն համարում է շախմատն օլիմպիական մարզաձեւ դարձնելը:**

# Փեդերերն ու Սաֆինան գլխավորում են դասակարգման ցուցակները

Հրապարակվել է պրոֆեսիոնալ թենիսիստների եւ թենիսիստուհիների դասակարգման հերթական ցուցակը: Տղամարդկանց ցուցակը էական փոփոխությունների չի ենթարկվել: Նախկինի պես դասակարգման ցուցակը գլխավորում է շվեյցարացի Ռոջեր Ֆեդերերը, որն Ուիմբլդոնում հաղթող ճանաչվելով, գերազանցել էր Փիթ Սամփրասի ռեկորդը: 2-րդ տեղում Ռաֆայել Նադալն է, որը վնասվածքի պատճառով արդեն բավական ժամանակ կորտ դուրս չի գալիս: Լավագույն տասնյակում են նաեւ Մարեյը (Մեծ Բրիտանիա), Ջոկովիչը (Սերբիա), Ռոդիկը (ԱՄՆ), դել Պոտրոն (Արգենտինա), Սիմոնն ու Տսոնգան (երկուսն էլ՝ Ֆրանսիա) Վերդասկոն (Իսպանիա) եւ Գոնսալեսը (Չիլի):



Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանը 15-րդ տեղում է: Դավիթը վնասվածքի պատճառով արդեն մի քանի ամիս կորտ դուրս չի գալիս: Նա վիրահատվել էր եւ այժմ դեռ ապաքինվում է:

Կանանց դասակարգման ցուցակում ռուսաստանցի Դինարա Սաֆինան պահպանել է առաջատարի դիրքը: Հաջորդ տեղերում Ուիլյամս քույրերն են, ընդ որում Սերենան գերազանցում է Վինուսին: Լավագույն տասնյակում են նաեւ Դեմենտեւան, Կուզնեցովան, Զվոնարյովան ու Պետրովան (բոլորն էլ՝ Ռուսաստան), Յանկովիչը (Սերբիա), Ազարենկոն (Բելառուս) եւ Վոզնյացկին (Դանիա):

# Յաո Մինն իր նախկին ակումբի սեփականատեր

«Հյուսթոն Ռոկիտսի» բասկետբոլիստ Յաո Մինը դարձել է չինական «Շանհայ Շարկսի» սեփականատեր: 28-ամյա բասկետբոլիստը հենց այդ թիմում է սկսել իր կարիերան: Չինական ակումբը հայտնվել էր ֆինանսական խոր ճգնաժամի մեջ, որի պատճառով թիմին հնարավոր է չթույլատրեին մասնակցել երկրի առաջնությանը: Յաո Մինին հաջողվեց համոզել ակումբի նախկին սեփականատիրոջը իրեն վաճառել բաժնետոմսերը:

«Մեծացել եմ Շանհայում, իսկ «Շանհայ Շարկսում» սկսել եմ պրոֆեսիոնալ բասկետբոլիստի կարիերաս: Բնականաբար, անտարբեր չէի կարող մնալ թիմի ճակատագրի հանդեպ: Հուսով եմ, որ կարող եմ ինչ-որ կերպ օգտակար լինել ակումբին», նշել է Յաո Մինը:

# Մախովելը կխաղա «Բարսելոնում»

**«Ինտերի» պաշտպան Մաքսվելը հնգամյա պայմանագիր է կնքել «Բարսելոնի» հետ: Նոր թիմում նրա տարեկան աշխատավարձը կկազմի 3,4 մլն ֆունտ ստեռլինգ: Բրազիլացի ֆուտբոլիստի համար «Բարսելոնը» 3 մլն ֆունտ ստեռլինգ է վճարել: Անցած մրցաշրջանի սկզբում Մաքսվելը թիմի հիմնական կազմի խաղացող էր, սակայն հետագայում իր տեղը զիջեց 18-ամյա Դավիթ Սանտոնին:**

# Նեդվեդը մնում է «Յուվենտուսում»

**Վերջերս մեծ ֆուտբոլին հրաժեշտ տված Պավել Նեդվեդը մարզչական աշխատանքի է անցել իր հարազատ «Յուվենտուսում»: Նրան նմանատիպ աշխատանք էին առաջարկել «Ինտերում», սակայն նա հրաժարվել էր:**

*էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

# Հոդվածների մրցույթ Բնակչության եւ զարգացման միջազգային համաժողով 15-ի շրջանակներում

1994 2009 ICPD/15 International Conference on Population and Development

1994թ. Կահիրեում կայացավ **Բնակչության եւ զարգացման միջազգային համաժողովը (ԲԶՄՀ):** Համաժողովին մասնակից 179 երկրների ներկայացուցիչները եկան այն համաձայնության, որ ժողովրդագրությունն ու զարգացումը խիստ փոխկապակցված են: Այս համոզման հիմքում ընկած էր այն մոտեցումը, որ թե՛ անհատական առաջընթաց եւ թե՛ համընդհանուր զարգացում երաշխավորելու համար անհրաժեշտ է հոգալ մարդկանց կրթական եւ առողջապահական կարիքները եւ խթանել կանանց ու աղջիկների զարգացումը: Համաժողովի արդյունքում մշակվեց գործողությունների 20-ամյա ծրագիր, որի առաջադրած նպատակներին հասնելու համար Հայաստանի կառավարությունը նույնպես ստանձնեց պարտավորություն իրականացնելու համապատասխան գործունեություն:

2009թ. ԲԶՄՀ-ի իրականացման 15 տարվա կապակցությամբ ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը (ՄԱԲՀ) սույն թվականի նոյեմբեր ամսին կազմակերպում է «ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ - ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ» խորագրով համաժողով, որի շրջանակներում ՄԱԲՀ-ն հայտարարում է մրցույթ՝ հրավիրելով բոլոր հետաքրքրված անձանց ներկայացնելու իրենց հոդվածները ներքոհիշյալ թեմաներով.

**Ժողովրդագրություն**

- ՀՀ ժողովրդագրական իրավիճակի բնութագիրը եւ փոփոխման միտումներն ու ուղղությունները (սեռատարիքային բուրգ, ծնելիություն, մահացություն)
- Ժողովրդագրական կանխատեսումներ
- Պետական մարմինների գործողությունները՝ ուղղված վերարտադրողական տարիքի բնակչության առողջության բարելավմանը, կյանքի սպասվելիք տեւողության բարձրացմանը եւ մահացության նվազեցմանը, որոնք հանդիսանում են ժողովրդագրական իրավիճակի բարելավման հիմնական խնդիրները
- Առողջապահության եւ բժշկագիտության նվաճումներն արդի հասարակության ժողովրդագրական հիմնախնդիրների լուծման հարցում
- Կրթական համակարգի բարելավման ազդեցությունը ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա
- Բնակչության կյանքի սպասվելիք տեւողությունը, սոցիալական ակտիվությունը նվազեցնող հիվանդացության դեղորայքային եւ ոչ դեղորայքային կանխարգելումը
- Ժողովրդագրություն եւ ընտանիք, ընտանիքի իդեալական չափը
- Ամուսնություններ, ամուսնալուծություններ
- Տարեցների հիմնահարցերը եւ քաղաքականությունը
- Ներգաղթ եւ արտագաղթ իրավիճակը եւ մարտահրավերները
- Տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ ժողովրդագրական իրավիճակի եւ Բնակչության եւ Զարգացման Միջազգային Համաժողովին ընդունված Գործողությունների ծրագրի իրականացման վրա
- Ընտանիքի ինստիտուտի զարգացումը
- Ծնող լինելու եւ պատասխանատու գործունեության համակցումը
- Բնակչության տարածքային անհամաչափ բաշխվածությունը որպես ժողովրդագրական հիմնախնդիր
- Հասարակության արժեքային համակարգի փոփոխության ազդեցությունը բնակչության վերարտադրողական վարքագծի վրա
- Շրջակա միջավայրը եւ ազգաբնակչության հիմնահարցերը
- Հավատահեն կազմակերպությունների եւ հասարակական կազմակերպությունների դերը Բնակչության եւ զարգացման միջազգային համաժողովին ընդունված գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ

**Գենդերային հիմնախնդիրը մշակութային նրբերանգներով**

- Գենդերային հավասարություն: Քաղաքականություն, ծրագրեր եւ օրենքներ
- Գենդերային հավասարություն: Կանանց տնտեսական զորացում
- Գենդերային հավասարություն: Կանանց քաղաքական մասնակցություն
- Գենդերային բռնության ազդեցությունը վերարտադրողական եւ հոգեբանական առողջության վրա
- Գենդերային բռնության ազդեցությունը հասարակության զարգացման վրա
- Գենդերային բռնություն: Խնդրի հասարակական եւ մշակութամտածելակերպային կողմը
- Գենդերային բռնություն: Ընտրողական (Սելեկտիվ) հղիության արհեստական ընդհատում - առողջապահական եւ հասարակական խնդիր

**Վերարտադրողական իրավունքներ եւ առողջություն**

- Վերարտադրողական առողջության պահպանություն առաջնային բուժ օգնության կոնտեքստում
- Ընտանիքի պլանավորում
- Երիտասարդների առողջապահական բարյացակամ ծառայություններ
- Սեռական եւ վերարտադրողական իրավունքը որպես մարդու իրավունքների մաս
- Անպտղության խնդիրները
- Աբորտների կանխարգելում եւ աբորտների հետեւանքների վերացում
- Սեռավարակների կանխարգելում եւ պայքար ՄԻԱՎ-ի դեմ
- Սեռական օրգանների չարորակ նորագոյացությունների կանխարգելում
- Վերարտադրողական առողջության բարելավման ծառայությունների մատուցման ընթացքում մարդու իրավունքների, էթիկական եւ մասնագիտական նորմերի պահպանում

Բոլոր ներկայացված հոդվածները կքննարկվեն համաժողովի մասնագիտական խորհրդի կողմից: Դրական որոշման դեպքում, վերջիններս կտպագրվեն համաժողովի ժողովածուում եւ կքննարկվեն համաժողովի նիստերի ժամանակ: Հոդվածի ներկայացման պայմաններին ծանոթանալու համար կարող եք դիմել ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գրասենյակ՝ 31-92-39 հեռախոսահամարով կամ **gyulkhasyan@unfpa.org** էլ. հասցեով: Հոդվածների ներկայացման վերջնաժամկետն է **2009թ. սեպտեմբերի 30-ը:**

## Մրցույթի հրավեր 089/09/PRO

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակը հայտարարում է մրցույթ՝ աշնանացան ցորենի եւ ազոտական պարարտանյութի ձեռք բերման համար 2 ԼՈՏ-ով: Մրցույթի մանրամասն հրավերին կարելի է ծանոթանալ ՄԱԶԾ-ի **http://www.undp.am** ինտերնետային կայքից կամ գնումների բաժնից Երեւան, Պետրոս Ադամյան 14 հասցեում:

Դիմել Գրիգոր Ախնոյանին՝ հեռ. 56 60 73+126 (ներքին), ժամը 14:00-16:00-ը:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝ հուլիսի 31, ժամը 17:00:

## Letter of Invitation 089/09/PRO

United Nations Development Programme (UNDP) Armenia announces a competition for procurement of winter wheat seeds and nitrogen fertilizer in two LOTs. Detailed Request for Quotation can be obtained from UNDP Armenia website at **http://www.undp.am** or from UNDP Armenia Procurement Unit, 14 Petros Adamyan St., Yerevan, from 14:00 to 16:00. Tel: 56 60 73 +126 (Grigor Akhnoyan).

Offers must be submitted to the UN security guards office at 14 Petros Adamyan St., Yerevan.

Deadline: 31 July 2009, 17:00 local time.

## «ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ

«Деловой Экспресс» շաբաթաթերթի հուլիսի 15-24-ի (N 27 (829)) համարում տպագրված «ԱԳԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ-ի «Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվությունը» կարդալ հետեւյալ բովանդակությամբ:

**ՄԻՋԱՆԿՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**
**«30» հունիսի 2009թ.**

«ԱԳԲԱ Լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ 60400 ք.Երեւան, Բայրոնի-1
(վարկային կազմակերպության անվանումը եւ գտնվելու վայրը)

*(հազ. դրամ)*

| ԱՆՎԱՆՈՒՄԸ | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Հաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 255,479 | 168,308 | 485,994 | 323,796 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | 74,593 | 59,010 | 145,896 | 107,167 |
| Զուտ տոկոսային եկամուտ | 180,886 | 109,298 | 340,098 | 216,629 |
| Շահաբաժնի տեսքով եկամուտներ | - | - | - | - |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով եկամուտներ | 429 | 3,084 | 4,021 | 4,134 |
| Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով ծախսեր | 4,182 | 3,355 | 9,346 | 5,590 |
| Առեւտրային նպատակներով պահվող ներդրումներից զուտ շահույթ/(վնաս) | - | - | - | - |
| Վաճառքի համար նախատեսված ներդրումներից զուտ շահույթ(վնաս) | - | - | - | - |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումներից զուտ շահույթ/ (վնաս) | - | - | - | - |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/( վնաս) | (2,514) | 2,267 | 41,647 | 8,270 |
| Այլ գործառնական եկամուտներ | 11,943 | 17,066 | 28,720 | 40,792 |
| Գործառնական եկամուտ | 186,562 | 128,360 | 405,140 | 264,235 |
| Վարկերից եւ այլ փոխառություններից առաջացած կորուստներ | 40,863 | 14,730 | 101,319 | 27,846 |
| Ընդհանուր վարչական ծախսեր | 54,492 | 49,990 | 115,107 | 101,011 |
| Այլ գործառնական ծախսեր | 3,583 | 2,072 | 10,696 | 6,798 |
| | - | - | - | - |
| Շահույթ մինչեւ հարկվելը | 87,624 | 61,568 | 178,018 | 128,580 |
| Շահութահարկի գծով ծախս /փոխհատուցում/ | 17,226 | 10,543 | 26,035 | 21,416 |
| Շահույթ հարկումից հետո | 70,398 | 51,025 | 151,983 | 107,164 |
| Մեկ բաժնետոմսին ընկնող բազային շահույթ | - | - | - | - |
| Մեկ բաժնետոմսին ընկնող նոսրացված շահույթ | - | - | - | - |

Վարկային կազմակերպության գլխավոր տնօրեն Ս.Գիշյան

Գլխավոր հաշվապահ Ա.Հակոբյան

## ACBA-CREDIT AGRICOLE BANK

«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն հայտարարում է Դիլիջան քաղաքում Բանկի մասնաշենքի կառուցման մրցույթ: Մրցույթի պայմաններին ծանոթանալու համար կարող եք զանգահարել (010) 42 10 08 հեռախոսահամարով կամ այցելել ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ «Շենգավիթ» մասնաճյուղ ք. Երևան, Բագրատունյաց փ. 16/2 հասցեով՝ ժամը 9:00-11:00 (աշխատանքային օրերին):

Մրցույթի անցկացման ժամկետն է հուլիսի 13-ից մինչև հուլիսի 23-ը:

Երեւանի ապրանքահումքային բորսայի հարթակում ս.թ. հուլիսի 21-ից իրականացվելու է Արմենտել ՓԲԸ-ի կողմից ներկայացված մարդատար եւ բեռնատար, մասնավորապես՝ ВАЗ, ГАЗ, Камаз եւ այլ մակնիշների ավտոմեքենաների, ինչպես նաեւ ս.թ. հուլիսի 24-ից ապրանքանյութական այլ արժեքների՝ ավտոպահեստամասերի, քարտրիջների, լարերի, ՀԴՄ-երի, ե/բ կոնստրուկցիաների եւ այլնի աճուրդային վաճառք:

Աճուրդները կիրականացվեն յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00-17.00, ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում:

Աճուրդներին մասնակցելու կարգի, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք այցելել բորսա, զանգահարել (37410) 565228, նամակագրել info@yercomex.am, ycre@intertel.am, կամ այցելել www.borsa.am:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.07.2009, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյյան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: